Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 627 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՓԵՏՐՈՒԱՐ 1886 (Ն. Տ.) 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1886 12 ՃԷՄԱԶԻ ԻՒԼ ԷՎՎԷԼ 1303

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه ده غلطه ده نورادونكيان خانده (آرەولك)
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ 200
» » Վեցամսեայ » » 100
» » Եռամսեայ » » 50
Գաւառաց » եւ տեղական Թղթատարով՝ տարեկան » » 240
Գաւառաց համար եւ տեղական Թղթատարով՝ վեցամսեայ » » 120
Օտար երկիրներ, տարեկան Ֆրանք 56
» » վեցամսեայ » 28

Դուրս զրկուած լրագրաց ծախքը Տնօրէնութեան վրայ է։ Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Կ. ՊՈԼԻՍ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՓԵՏՐՈՒԱՐ, 1886

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈԼՈՆԻԱ

ՊԻՍՄԱՐՔ ԻՇԽԱՆԻՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԲՈԼՈՆԱԿԱՆ ՏԱՐՐԻՆ ՋՆՋՄԱՆ ՀԱՄԱՐ Ի ԲՐՈՒՍԻԱ

(ՀԵՌԱԳՐԵՐ «ԹԱՅՄԶ»Ի ԹՂԹԱԿՑԷՆ)

ՊԷՐԼԻՆ, 9 փետր.

«Մինչ Քաշէլի կաթոլիկ Արքեպիսկոպոսն և այլք միջոցներ կը խորհին Իռլանտայի կալուածական խնդրոյն լուծման համար, Պիսմարք Իշխանը, Պետական Ընկերվարականաց պարագլուխն, արմատական եղանակ մը գտած է լուծելու նմանօրինակ դժուարութիւն մը ի Բրուսիական Բոլոնիա։ Կը յիշուի թէ բոլոնական խնդրոյն վրայ իւր մեծ ճառի մէջ Իշխանը ծանուցած էր թէ ինչ ինչ դրական տնօրինութիւնք կը պատրաստուին՝ լեհ տարրին բրուսիական հողին վրայ աճումն արգիլելու համար, և այժմ այդ տնօրինութեանց գլխաւորը Բրուսիոյ Խորհրդարանին ներկայացուցած է՝ «Օրինական ծրագիր վասն հաստատման և յառաջացման գերման գաղթականաց յԱրեւմտեան Բրուսիա և ի Բոզէն» անուամբ։

«Ծրագիրն յօրինուած է Հողագործութեան, պետական հողերու և անտառներու Նախարարին ձեռամբ, և կը տրամադրէ թէ բրուսիական կառավարութեան տրամադրութեան ներքեւ պիտի դրուի 100,000,000 մարքի (այսինքն հինգ միլիոն անգլ. ոսկւոյ) գումար մը, որպէս զի Կառավարութիւնը կարող լինի զօրացնել գերման տարրն Արեւմտեան Բրուսիոյ և Բոզէնի նահանգաց մէջ, ջնջելով լեհացուցիչ ազդեցութիւններն։ Այս նահանգաց մէջ պիտի հաստատուին գերման հողագործներ և մշակներ, որոց համար կալուածներ պիտի գնուին, և հանրային շէնքեր պիտի կառուցուին։ Կառավարութիւնք բոլոնացի հողատէրներէ գնած արտերն և այլ կալուածները մաս առ մաս պիտի վաճառէ կամ վարձու տայ Գերմաններու, որք տարուէ տարի վճարում մ'ընելով, հողատէր պիտի լինին 25էն մինչև 50 տարիէ։ Հինգ միլիոն ոսկին պիտի հաւաքուի պարտամուրհակներ հանելով ի հրապարակ։ Այս օրէնքի գործադրման պիտի հսկէ խորհրդարանական յանձնախումբ մը, որ ամէն տարի տեղեկագիր մը պիտի մատուցանէ Բրուսիոյ Խորհրդարանին։

«Այս է Պիսմարք Իշխանին «Բոլոնական Հողային Ծրագիրն», որուն պիտի յաջորդեն ուրիշ ծրագրեր, որոց համար ալ Խորհրդարանը գումարներ յատկացնել պիտի պարտաւորի, ի մասին անուանման գերմանացի ուսուցչաց, հաստատման գերմանական վարժարանաց և պարտաւորիչ գործածութեան գերմաներէնի Բրուսիական Բոլոնիոյ բոլոր դպրոցներուն և դատարաններուն մէջ։ Դիտելի է սակայն թէ Բոլոնացւոց հողերը բռնի գնելու խօսք չկայ դեռ, այլ 100 միլիոն մարքը պիտի գործածուի գնելու այն բոլոնական կալուածներ միայն որք մերթ ընդ մերթ ի վաճառ կը հանուին»։

ՎԻԷՆՆԱ, 8 փետր.

«Տարեկան Բոլոնական Պարահանդէսն այս երեկոյ տեղի ունեցաւ։ Ամէն եղանակի ամենէն փայլուն պարահանդէսներէն մին է արդէն, բայց այս տարի ազգասիրական ցոյցի մը կերպարանն ստացաւ՝ Պիսմարք Իշխանին հակաբոլոնական յայտարարութեանց շնորհիւ։ Բոլոնացի ազնուականք խմբովին ներկայ էին, և ակնախտիղ տեսարան մը կը կազմէին իրենց ազգային համազգեստք։

«Վարշաւիայէ կը ծանուցուի թէ արիւնալից կռիւ մը տեղի ունեցած է ի մէջ ոստիկանութեան և Լուպլինի բնակչաց մի մասին, մի քանի կաթոլիկ վարդապետներու ձերբակալման առթիւ։ Կ'երեւի թէ գաղտնի կաթոլիկ մատուռ մը հաստատուած էր վերջերս ի Լուպլին, և վարդապետներն, որ առանց կառավարական արտօնութեան պաշտօն կը կատարէին պապական ծիսով, կալիցիացիներ են եղեր (Աւստրահպատակ Բոլոնացիներ), որք կեղծ անուններով անցագիր առեր են։

«Վարշաւիայէ գրուած ուրիշ նամակներու նայելով, Լիթուանիոյ մէջ կաթոլիկ եկեղեցականաց հալածումը վերսկսած է աղմկաւ, որովհետեւ կաթոլիկ եկեղեցականներ յաջողեր են նորէն կարգ մը յանդուգններ ի կաթոլիկութիւն դարձնել։ Վերջերս շատ մը եկեղեցականներ ձերբակալուեր են, որոց հօտին մէջ մեծ գրգռութիւն ծագեր է այս կառավարական խստութիւն։

«Կալիցիայի երեք լրագրաց երեկուան թուով հրատարակեալ բոլոր թերթերը գրաւեցան՝ Պիսմարք Իշխանին դէմ խիստ յօդուածներ պարունակելուն պատճառաւ։»

ՎԻԷՆՆԱ, 10 փետր.

«Լեմպերկի բոլոնական թերթեր հետեւեալ տեղեկութիւնն ստացած են Վարշաւիայէն. —Մօտերս ռուս ոստիկանութիւնը բռնի մտաւ ի Լուպլին Դոմինիկեանց վանքն, և ձերբակալեց Հայրերէն երեքն, հակառակ ընդդիմութեան կաթոլիկ լեհ ժողովրդեան, առանց ո՛ և է դատական քննութեան։ Այս երեք ծերունի վարդապետք «վարչային տնօրինութեամբ» աքսորեցան Սիպերիա, Հայր Վասիլիոս՝ 8 տարւոյ համար, Հայր Վիչենցիոս՝ 5 և Հայր Լէոնարտոս 3 տարւոյ համար։ Լուպլինի կաթոլիկ լեհական վանքն ալ Օրթոտոքս ռուս եկեղեցւոյ մը վերածուեր է։

«Լեմպերկի և Բրագուի (Կալիցիա) շատ մը խանութպանք և արհեստաւորք դաշնակցութիւն մը կազմեցին, խօսք մէկ ընելով որ բնաւ առեւտրական յարաբերութիւն չունենան Գերմանիոյ հետ։ Այս շարժում ծաւալելու վրայ է. բայց սխալ թելադրութեան մը արդիւնք է. զի շարժման հեղինակները կը մոռնան թէ գերման ժողովրդեան մեծամասնութիւնը, Գերմանիոյ Երեսփոխանութեան մեծամասնութեան միջոցաւ, դատապարտած է Պիսմարք Իշխանին բոլոնական աշխարհավարութիւնն։ Իշխանին հակաբոլոնական ընթացքէն ամենէն աւելի վնասուեցան գործարանատէրք, որք, ընդարձակ գործեր ունենալով Ռուսիոյ և Բոլոնիոյ հետ, սովորած էին ռուսահպատակ և աւստրահպատակ Բոլոնացիներ գործածել իբրեւ գրագիր, գործակալ և ուղեւոր։ Այդ գերման գործարանատերաց հետ ամէն գործ դադրեցնել շատ դէշ փոխարինութիւն մը կը լինի այն բարեկամութեան զոր նոքա ցուցուցեր էին Բոլոնացւոց։ Բաց աստի, Լեմպերկցի և Բրագուցի գործի տէր մարդոց այս ընթացք, Գերմանիոյ և Կալիցիոյ միջեւ առեւտրական յարաբերութիւններն ընդհատելով, աւելի կը նպաստէ քան կը վնասէ Պիսմարք Իշխանին խորհրդոց, որ կ'ուզէ ուրիշ բոլոնական կեդրոններու հետ ամեն հաղորդակցութիւն կտրել տալ, և բրուսիական Բոլոնիան Գերմաններով լեցնել»։

Պիսմարք Իշխանին Բրուսիոյ հպատակ բոլոնական տարրը տակաւ ջնջելու համար բռնած և բարձրաձայն ջատագոված աշխարհավարութիւնը մահացու հարուած մը կը նկատուի ամեն փոքր ազգութեանց համար որք չեն անկախ։ Պիսմարք Իշխանին խօսքերը, դժբախտաբար, միջազգային օրէնքի կարգ կ'անցնին, և բնականաբար կը վախցուի թէ իւր տուած դէշ օրինակին պիտի հետեւին դրացի Կառավարութիւններ, որք պետական նմանօրինակ շահեր ունենալ կրնան կարծել։ Փոքր ազգութիւնները տակաւ ջնջելու քաղաքականութիւնն ինքնին նոր բան մը չէ։ Ժամանակ մը Աւստրիա, Մէգէրնիխի պէս նախարարապետի մը օրով, նոյն քաղաքականութիւնն ամենայն ազդուութեամբ ի գործ կը դնէր։ Ռուսիա միշտ նոյն քաղաքականութիւնը բռնած է։ Գերմանիոյ լուսաւորութենէն աւելի ազատամիտ ընթացք մը կրնար ակնկալուիլ։ Եւ թէպէտ գերման ժողովուրդն, իւր Երեսփոխանութեան ժողովոյ մեծամասնութեամբ, դատապարտեց Պիսմարք Իշխանին հակաբոլոնական քաղաքականութիւնը, բայց դժբախտաբար Բոզէն Բրուսիոյ մէջ է, ուր Պիսմարք Իշխանը գերման ժողովրդեան զգացումն ի հաշիւ առնլու օրինական պարտականութիւն մը չունի։ Եթէ ինքզինք խորհրդարանական կապերէ աւելի եւս ազատ կրնար զգալ, Պիսմարք Իշխանը փնտռել պիտի տար զՄէգէրնիխ, ա՛նչափ յետադիմական գաղափարներու ներկայացուցիչ մ'է, ա՛նչափ «կարմիր պահպանողական» մ'է ինքնին, ինչպէս երբեմն սովոր էր ըսել արդի Վիլհէլմ Կայսրն, յայնժամ պարզ Թագաւոր Բրուսիոյ։

Բոլոնական տարրը ջնջելու համար Պիսմարք Իշխանին յղացած ծրագիրը նոյնչափ «կատարեալ» է, որչափ կատարեալ էր, Չարլզ Ա. Թագաւորին օրով, Նախարարապետ Սդաֆֆորտ Կոմսին ծրագրած աշխարհավարութիւնն («Thorough»), Անգլիոյ ազատութիւնները ջնջելու համար։

Իշխանը կը խորհի [illegible] կամ [illegible] ջնջել լեհ տարրը, տակաւ գնելով և գերման հողագործաց տալով Բոլոնացւոց բոլոր կալուածները։

Իշխանը կը յուսայ [illegible] ջնջել լեհ տարրը, բազմացնելով գերման դպրոցները բոլոնական գաւառաց մէջ, և գերմաներէնը պարտաւորիչ ընելով կրթական, դատական և ամեն հանրային հաստատութեանց մէջ։

Իշխանը կը ճգնի [illegible] եւս անդամալուծել բոլոնականութիւնն, իւր ձեռք առնլով բոլոնացի Եպիսկոպոսաց և Վարդապետաց անուանումներն, սկսեալ Բոզէնի Արքեպիսկոպոսէն, որ տակաւին չկրցաւ անուանիլ. զի Պապին առաջարկած ամեն ընտրելիք մերժուեցան Պիսմարք Իշխանէն, որ կ'երեւի թէ ի վերջոյ պիտի յաջողի բոլոներէն չգիտցող և Բոլոնացւոց բնաւ չհամակրող բայց անուանապէս բոլոնական ազգութեան պատկանող Արքեպիսկոպոսացու մը գտնել, թէեւ լինի պարզ քահանայ։

Բիրտ ոյժն ալ յօգնութիւն կոչած է Իշխանը. զի եթէ այս տնտեսական, կրթական և եկեղեցական տնօրինութիւնք Բրուսիոյ բոլոնացի հպատակաց համար են, օտարահպատակ եղող բայց բազում տարիներէ հետէ ի Բրուսիական Բոլոնիա բնակող Բոլոնացւոց համար բիրտ ոյժը բաւական կը համարուի։ Ոստիկանութիւնն արտաքսած է և պիտի շարունակէ արտաքսել զանոնք, առանց խտիր դնելու երիտասարդին և ծերունւոյն, այր և կնոջ, առողջին ու տկարին միջեւ։

Եւ այս ամենայն ի գործ կը դրուի երբ Բրուսիոյ Բոլոնացիք աւելի հանդարտ են քան Ռուսիոյ և Աւստրիոյ Բոլոնացիներն, և ազգային ո՛ և է շարժում չեն ցուցներ։ Իսկ եթէ ազգային ինքնօրինութիւն կամ անկախութիւն ձեռք բերելու ո՛ և է [illegible] արտայայտեն, պաշտօնական և անագորոյն ջարդ մը շատ մը տարիներու աշխատութիւնը պիտի խնայէ Պիսմարք Իշխանին՝ մէկէն բնաջինջ ընելով Բրուսիոյ բոլոնական տարրը։

* *

Պիսմարք Իշխանին հակաբոլոնական աշխարհավարութիւնն երեւի թէ շատ դէշ ազդեցութիւն պիտի ընէ Գերմանիոյ և Աւստրիոյ յարաբերութեանց վրայ։ Աւստրիոյ Բոլոնացիք վերջին տարւոց մէջ ստացած են մեծ բաժին մը քաղաքական իշխանութեան։ Երկու Բոլոնացիներ անդամ են աւստրիական արդի Նախարարութեան. Բոլոնացիներ կան Աւստրիոյ ամեն կառավարական պաշտօնատանց մէջ, դրամական մեծ հաստատութեանց մէջ, երկաթուղեաց վարչութեանց մէջ. և Բոլոնացիներ մեծ դեր մը կը կատարեն Վիէննական ընկերութեան մէջ։ Պիսմարք Իշխանին Բոզէնի Բոլոնացւոց դէմ հրատարակած պատերազմն Աւստրիոյ Բոլոնացիները կը վրդովեցնէ իբրեւ իրենց ազգային թշնամին նկատելու զՊիսմարք Իշխանն, և հետեւապէս կը կարծուի թէ անոնք աւստրիական արքունեաց և նախարարութեան մէջ իրենց ունեցած ազդեցութիւնը պիտի գործածեն Գերմանիոյ հետ սերտ դաշնակցութեան դէմ, որ ցարդ կը ջատագովուէր։ Յայսմ մասին Աւստրիոյ Բոլոնացիք կը փայփայեն աւստրո-հունգարական Տէրութեան ուրիշ Սլաւներուն համակրութիւնն, որք Պիսմարք Իշխանին մեծ ճառը կը նկատեն բովանդակ Սլաւութեան դէմ պատերազմի յայտարարութիւն մը։ Որովհետեւ Վիէննայի Խորհրդարանին մեծամասնութիւնն այժմ սլաւ է, Դաաֆֆէ Կոմսին Նախարարութիւնն ի հարկէ կը պարտաւորի գոհացում տալ սլաւ տարերաց բաղձանքին ընդդէմ Պիսմարքեան աշխարհավարութեան։

ԱՔՍԱՔՈՖ

(«ԹԱՅՄԶ»ԻՆ ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿԻ ԹՂԹԱԿՑԷՆ)

«Յանկարծական և անակնկալ մահ Գ. Աքսաքոֆի, որոյ լուրն այս գիշեր Պետերսպուրկ հասաւ Մոսկուայէ, սլաւոն աշխարհին մէջ ցնցում մը պատճառեց, որոյ նմանն զգալի եղած էր միայն ի լուր նմանապէս յանկարծական մահուան Սքոպելէֆ զօրավարին ի Մոսկուա մի քանի տարի յառաջ։ Տարօրինակ զուգադիպութեամբ մը, Սլաւութեան այս երկու ջատագովք, մին սրով և միւսը գրչով, որոց հիւանդութեամբ մեռան ճիշդ նոյն վայրկենին յորում իրենց իւրաքանչիւրին ազդեցութիւնն ամեն ժամանակէ աւելի հարկաւոր և օգտակար կը թուէր իրենց համակրողաց։ Տակաւին մի քանի շաբաթ յառաջ էր որ Գ. Աքսաքոֆ Պետերսպուրկէ ազդարարութիւն մը ստացաւ՝ Պուլկարիոյ խնդրոյն մէջ ռուս կառավարութեան այժմեան ընթացքին դէմ իւր կծու յօդուածոց պատճառաւ։ Հակառակ այդմ, իւր «Ռուս» թերթի մինչեւ վերջին թուոյն մէջ կը շարունակէր դատապարտել ռուս կառավարութեան սլաւեան արտաքին աշխարհավարութիւնը, ցաւելով որ Ցարին կառավարութեան ազդեցութիւնը կը գործածուի ընդդէմ պուլկարական Միութեան, զոր ամենայն զօրութեամբ կը պաշտպանէր Գ. Աքսաքոֆ։ Սլաւասէր կուսակցութիւնն անյաջողութեան դատապարտեցաւ այժմեան Արեւելեան Խնդրոյն մէջ բաղդատմամբ իւր անդիմադրելի ոյժին, զոր ցուցուց 1877ին։ Այնու հանդերձ, սլաւասէր կուսակցութեան խորհրդոց և զգացմանց այն երեւելի ջատագովն, Աքսաքոֆ, տակաւին իբրեւ մի մեծ ոյժ կը նկատուէր։ Այս առտու Նովոյէ Վրէմիա սեւ շրջանակով հրատարակուած է, և միւս լրագիրք ալ սեւ գծերու մէջ կենսագրականներ կը պարունակեն։ Տարակոյս չկայ թէ սլաւեան գործոց արդի հանգամանաց մէջ Գ. Աքսաքոֆի մահը քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող եղելութիւն մ'է։ Ռուսիոյ արտաքին աշխարհավարութեան արդի ուղղիչներուն մէկ մեծ հակառակորդն անհետացաւ։ Պետերսպուրկի պէս համաշխարհիկ քաղաքի մը մէջ կարծեաց ո՛րչափ տարբերութիւնք լինին Գ. Աքսաքոֆի կարեւորութեան մասին, խնդիր չկայ թէ, երբ ժամանակներն ու պարագայներն աւելի նպաստաւոր էին, Գ. Աքսաքոֆ Ռուսիոյ մէջ մի մեծ ոյժ եղած էր։ Ո՛չ մէկ ռուս հրապարակագիր կարող էր Աքսաքոֆի չափ յուզել սլաւեան սիրտը։ Նովոյէ Վրէմիա կ'ըսէ. «Իւր ազնիւ զգացմունք հրալից պերճախօսութեամբ մը զարդարուած էին»։ Ռուս ժողովրդեան հրապարակային տրիբունն էր, և հակառակ պաշտօնական ընդդիմութեան, երբեք չվարանեցաւ խորհելէ և խօսելէ իբրեւ ճշմարիտ Ռուս մը, որ հակառակ է Արեւմտեան ապականութեան և անաստուածութեան։ 1867ին ոչ նուազ քան ինն ազդարարութիւններ ստացաւ Վալուեֆ Կոմսին Նախարարութենէն, որ Ռուսիոյ մէջ շատ ազատական վարչութիւն մը կը համարուէր յայնժամ։ Ամեն մարդ գիտէ Աքսաքոֆի հզօր իշխանութիւնն ի Մոսկուա, վերջին արեւելեան տագնապին մէջ, որ նախասահման եղաւ 1878ի պատերազմին։ Այն ատեն ինք նախագահ էր Մոսկուայի Սլաւեան Ընկերութեան, և Պեսարապիոյ մէջ պուլկարական ազգային զինուորութիւնը կազմակերպելէն զատ, գաղտնապէս տուաւ նորավարժ պուլկար զինուորութեան 10,000 Շասբօ հրացան, 12ի չափ Քրուբի թնդանօթ և մեծ քանակութեամբ ռազմամթերք, զորս անհատ նուէրներով հայթայթած էր։ Ինք և իւր բարեկամք զՌուսիա պատերազմի մղելով ա՛յնչափ մեծ ազդեցութիւն մ'ի գործ դրեր էին, որ Պերլինի Դաշնագրոյն կնքուելէն յետոյ, որ Գ. Աքսաքոֆ «ռուս ժողովրդեան դէմ յայտնի դաւաճանութիւն» կ'անուանէր, Կառավարութիւնը պարտաւորեցաւ փակել Մոսկուայի Սլաւեան (կամ Համասլաւեան) Ընկերութիւնն, և թէպէտ Եւրոպա տակաւին կը վախնայ Մոսկուայի Սլաւեան Ընկերութենէն, բայց այնուհետեւ Մոսկուայի մէջ այն անուամբ մարմին չէ մնացած։ Միայն Պետերսպուրկի, Քիէֆի և Օտեսայի մէջ այն ահարկու Ընկերութեան ճիւղերը կարելի է տակաւին գտնել։ Այս իրողութիւնք ծանօթ չեն տակաւին։ Գ. Աքսաքոֆ «Ռուս»ի վերջին թիւերէն միոյն մէջ դառնապէս կը գանգատէր իրեն և Ընկերութեան Մոսկուացի այլ անդամոց նկատմամբ Կառավարութեան բռնած ընթացքէն։ Կ'ամբաստանէր զԿառավարութիւն թէ Ընկերութեան

—)(35)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

ԲԷՍՔԱՏ ԵՒ ՄԱԹԻՖՈՒ

Տաղաւարին առջեւ խախուտ ձողակի մը վրայ խեղճ տախտակ մը կախուած էր, իբր նշանակ, որոյ վրայ հետեւեալ հինգ բառերը գծուած էին ածուխով, յոյժ անարուեստ կերպիւ.

ԲԷՍՔԱՏ ԵՒ ՄԱԹԻՖՈՒ
Ֆրանսացի ըմբշամարտք

Ֆիզիքական տեսակէտով, և անշուշտ բարոյական տեսակէտով ալ, այս երկու մարդիկ ա՛յնչափ աննման էին իրարու, որչափ կրնան լինիլ երկու մարդկեղէն արարածք։ Միայն իրենց հայրենակցութիւնը կրցած էր միաբանեցնել զիրենք՝ ապրուստ ճարելու համար զաշխարհ պտըտելու։ Երկուքն ալ Ֆրանսայի Բրովանս գաւառէն էին։

Բայց ուստի՞ կուգային այս անհեթեթ անուանք, որք թերեւս նշանակութիւն մ'ունէին իրենց հեռաւոր հայրենեաց մէջ։ Արդեօք աշխարհագրական այն երկու կէտերէ՞ն առնուած էին, որոց միջեւ կը բացուի Ալժէրի ծովածոցը. Մաթիֆու հրուանդանն և Բէսքատ սարաւանդն։ Եւ արդարեւ այս երկու անուանք կատարելապէս յարմարած էին անոնց, ինչպէս Ատլաս անունը տօնավաճառաց հսկաներու։

Մաթիֆու հրուանդանն յաղթաբերձ բլուր մ'է Ալժէրի ընդարձակ նաւահանգստին հիւսիսային արեւելեան ծայրն, և կարծես ասպարէզ կը կարդայ կատաղի տարերաց։

Արդ՝ այսպէս էր Մաթիֆու ըմբիշն, Ալկիդէս մը, Բորթոս մը, Ռմպրոսյներու, Նիքոլա Քրէսթներու և այլ մեծանուն ըմբշաց արժանի նախահայր մը։

Այս ըմբիշ՝ վեց ոտք երկայն հասակ, խոշոր գլուխ մը, նոյն համեմատութեամբ ուսեր, դարբնարանի փքոցի նման կուրծք, երկտասանամեայ ծառաբունի պէս սրունք, մեքենայի լծակի նման թեւեր, թիթեղ կտրող մկրատներու նման ձեռներ։ Վերջապէս մարդկային ուժի փառաւոր հրաշալիք մ'էր. և եթէ իւր տարիքը գիտցած լինէր, զարմացմամբ պիտի իմացուէր թէ հազիւ քսան-երկու տարու կար։

Այս մարդ, միջակ խելքի տէր, բայց բարեսիրտ էր, և պարզ ու քաղցր բնաւորութիւն մ'ունէր։ Ատելութիւն և զայրոյթ չէր գիտեր։ Մարդու գէշութիւն չէր ըներ։ Հազիւ կը սեղմէր առ ինքն կարկառեալ ձեռքը, վախնալով որ կը ջախջախէր իրենին մէջ։

Իւր այսչափ զօրեղ բնաւորութեան մէջ՝ վագրի հանգամանք բնաւ չունէր, այլ միայն անոր ուժն ունէր։ Իւր ընկերին ամեն ակնարկութեանց կը հնազանդէր։ Կարծես թէ բնութեան մի քմահաճոյքն այն [illegible] որդի ըրած էր զայն [illegible]։

Իբր հակապատկեր, Ալժէրի ծովախորշին արեւմտեան ծայրը գտնուող Բէսքատ սարաւանդը բարակ և սրածայր է, ծովուն մէջ երկնցած նուրբ լեզու մ'է։ Այս պատճառաւ Բէսքատ մականունը տրուած էր այդ քսանամեայ փոքրիկ, նիհար և քնքուշ երիտասարդին, որ միւսին քառորդ ծանրութիւնը չէր կշռեր, բայց ճարպիկ, սթափ, ուշիմ և անյողդողդ բնաւորութեան տէր, միշտ անփոփոխ թէ՛ յաջողութեան և թէ՛ ձախողութեան մէջ, տեսակ մը փիլիսոփայ, հնարագէտ և գործնական, ճշմարիտ կապիկ մը, առանց չարութեան, և անքակտելի կերպիւ կապուած այն յաղթանդամ Թանձրամորթին հետ, որուն կ'առաջնորդէր աճպարարական կենաց ամեն արկածից մէջ։

Երկուքն ալ լարախաղաց և աճպարար էին արհեստով, և տօնավաճառները կը շրջէին։ Մաթիֆու ըմբշամարտութիւն կ'ընէր, ուժոյ վերաբերեալ խաղեր կը կատարէր, երկաթէ ձողեր կը ծռէր իւր ծնկոսկրին վրայ, ամենէն խոշոր և ծանր մարդիկը կը վերցնէր իւր ձկտեալ թեւով, և իւր ընկերը գնտախաղի գնտակի մը պէս կը խաղցնէր։ Վերջապէս Բէսքատ խեղկատակութիւն կ'ընէր, կ'երգէր, կը խաղար, կը զուարճացնէր հասարակութիւնն իւր հանճարեղ ծաղրաբանութեամբք և կը զարմացնէր իւր թղթախաղերով, որոց մէջ կրնար մրցիլ ամենաճարտար ձեռնածուաց հետ, և հաշւոյ ու բաղդի խաղերու մէջ ամենէն խորամանգներուն կը յաղթէր։

Ինչո՞ւ համար ուրեմն, պիտի հարցնեն անշուշտ ընթերցողք, այդ երկու խեղճ ընկերք ուրիշ տաղաւարներու չափ հանդիսատես չէին կրնար գտնել։ Ի՞նչ պատճառաւ չէին կրնար նիհար հասոյթ մ'իսկ հայթայթել այն օր։ Ստուգիւ զարմանալի էր։

Սակայն իրենց լեզուն, որ բրովանսական և իտալական լեզուաց հաճելի խառնուրդ մ'էր, դիւրաւ կը հասկցուէր դալմատացի հասարակութենէն։ Բրովանսէն չուելնէն ի վեր, առանց ծնողաց, զոր երբեք չէին տեսած, ճշմարիտ արտադրութիւնք ինքնաբոյս սերնդեան, կրցած էին իրենց կեանքը պահպանել, շուկաներն ու տօնավաճառները պտըտելով, խեղճութեամբ քան թէ դիւրութեամբ ապրելով, և եթէ ամեն օր նախաճաշ չընէին, գոնէ կ'ընթրէին, որ կը բաւէր, վասն զի, ինչպէս որ կը յիշէր Բէսքատ, պէտք չէր անհնարինը խնդրել։

Եւ սակայն, այդ տօնի օրն, եթէ բարեմիտ տղան անհնարինը չէր խնդրեր, գոնէ կը փորձէր, ջանալով քանի մ'երկոտասնեակ հանդիսատես ձգել իւր տաղաւարին առջեւ, յուսալով որ կը հաճէին իւր խեղճ խաղարանն այցել։ Բայց ոչ իւր շաղփաղփութիւնք, որք ծիծաղաշարժ ձեւ մը կուտային իւր օտար արտասանութեան, ոչ իւր ծաղրաբանութիւններն, որք կատակերգակի մը բաղդը կրնային շինել, ոչ իւր խեղկատակութիւններն, որք եկեղեցեաց խորշերուն մէջ գրուած քարէ սուրբերն իսկ կրնային խնդացնել, ոչ ալ իւր անհեթեթ կերպարանքն ու ձեւերն ազդեցութիւն չէին ըներ հասարակութեան վրայ։

Այսու ամենայնիւ, այս երկու աճպարարք քանի մ'ամիսներէ ի վեր ծանօթ էին Դալմատիոյ հասարակութեան։

Բրովանսէն մեկնելէ յետոյ, երկու բարեկամք, Ալպեանց ծովեզերքէն, Միլանէն, Լոմպարտիայէն և Վենետիկէն անցեր, պտըտեր, մինչև Թրիէստ գնացեր էին, անտի ալ Իստրիոյ ճանբով Դալմատիոյ ծովեզրն իջեր, Զարա, Սալոնէ և Րակուզա եկեր էին, միշտ յառաջ քալելով և երբեք ետ չդառնալով։ Ետ չէին դառնար, որովհետեւ հինցած էին։ Իսկ յառաջ երթալով նոր խաղերու ցանկ մը կը տանէին, յորմէ կրնար դուցէ հասոյթ ելնել։ Այժմ, սակայն, կը տեսնէին թէ իրենց պտոյտն, որ երբեք յոյժ յաջող եղած չէր, յոյժ ապարդիւն լինել կ'սպառնար։ Այս պատճառաւ խեղճերը միակ փափաք մ'ունէին, որում չէին գիտեր ի՛նչպէս պիտի հասնէին. այն էր իրենց հայրենի երկիրը վերադառնալ, տեսնել զԲրովանս, և ոչ եւս հեռանալ իրենց ծննդավայրէն։ Բայց ռումբ մը կապուած էր իրենց ոտքին, աղքատութեան ռումբն, և այդ ռումբով քանի մը հարիւր ժամու ճանբայ քալել դժնդակ բան էր։

Սակայն, ապագայն մտածելէ առաջ ներկայն պէտք էր մտածել, այն էր իրիկուան ճաշն, որ ապահովեալ չէր։ Իրենց դրամարկղին մէջ, եթէ կրնայ այդ յաւակնոտ անունը տրուիլ թաշկինակի մը ծայրին, որոյ մէջ կը ծրարուէր սովորաբար երկու ընկերաց բոլոր հարստութիւնն, ոչ մէկ քրայցեր չկար։ Ի զուր Բէսքատ յուսահատ ճիգեր կ'ընէր հանդիսատեսներ հաւաքելու, ի զուր Մաթիֆու իւր հուժկու բազուկները ցուցնելով ուժի ահաւոր փորձեր ու խաղեր կը խոստանար։ Ոչ մի հանդիսատես յօժարութիւն չէր ցուցներ տաղաւարը մտնելու։

—Ո՞ւր պիտի երթանք ասոր վերջը, կ'ըսէր Բէսքատ։

—Այս իրիկուն չպիտի՞ ճաշենք, կ'ըսէր Մաթիֆու։

—Իմ չճաշելս հոգ չէմ ըներ, ըսաւ Բէսքատ, բայց դու պէտք է որ ճաշես, Մաթիֆո՛ւ։ Ես ո՛րչափ քիչ ուտեմ, ա՛յնչափ կը նիհարնամ, և ո՛րչափ նիհարնամ, ա՛յնչափ հետաքրքրաշարժ կը լինիմ, այնպէս չէ՞

—Ճշմարիտ է, պատասխանեց Մաթիֆու պարզութեամբ։ Ըսել է թէ, իմ չահուս համար ես պարտիմ ուտել։

—Այո՛, իմ չահուս համար ալ ես պարտիմ չուտել։

—Այնպէս որ, եթէ մէկ մարդու համար միայն ուտելիք գտնե՛նք . . . ։

—Դու պարտիս ուտել։

—Բայց թէ որ երկուքի համար գտնե՛նք . . .

—Դարձեալ դու պարտիս ուտել, Մաթիֆո՛ւ, վասն զի դու երկու մարդ կ'արժես։

—Չորս . . . վեց . . . տասն ըսէ, գոչեց հսկայն, զոր տասն մարդ չէին կրնար ընկճել։

(Շարունակելի)

ւրամը բանի գրուած էր ։ Իվան Սերգիյեւիչ Աքսաքոֆ չատ մը լրագրերու մէջ գրուած է ․ 1823 հոկտ. 7ին ծնաւ Օրէնպուրկի նահանգին մէջ․ հայրն էր Սերգէ Դիմոֆէյվիչ Աքսաքոֆ, նմանապէս հանրածանօթ հրապարակագիր մը ։ Իր գլխաւոր կրթութիւնն առաւ Բեդերսպուրկի Իրաւագիտական վարժարանին մէջ, և իր հանրային պաշտօնավարութիւնն սկսաւ Մոսքուայի Ծերակոյտին մէջ։ Յետոյ անցաւ Ներքին գործոց պաշտօնատունն, և պաշտօնով մը ղըրկուեցաւ Պեսարապիոյ աղանդաւորաց մօտ ։ Այլ և այլ ժամանակներ ուրիշ պաշտօններ վարեց․ կամաւոր եղաւ Խրիմու պատերազմին մէջ, և 1858ին վերադառնալով Մոսկուա, գրական կեանք մը սկսաւ իբրեւ խմբագիր Պէչէեա Թերթին։ Յետոյ հրատարակեց Օր լրագիրը, Մոսկվա և այլ թերթեր։ Իր վերջին լրագիր էր Ռուս։ Իր մահ մեծ հարուած մ'է ռուս Համասլաւեանց։»

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՂԵՐ
Ի ՖՐԱՆՍԱ

Երեսփոխ. փետր. 8ին վերջացուց երկար վիճաբանութիւն մը Կրթական Ծրագրոյն 12րդ յօդուածին վրայ, որոյ նպատակն է ամեն Նախակրթարանաց աշխարհականացումը ։ 1882ի Կրթական Օրէնքն,—որով կրթութիւնը պարտաւորիչ եղաւ և կրօնի ուսումը բարձաւ դպրոցներէն, (այն տրամադրութեամբ թէ փոքրոց ծնողք կրնան կիւրակի օրերը կրօնի ուսում աւանդել տալ իրենց զաւակաց.)—ուսուցչական մարմնոյն չէր դպած ։ Հասկցուած էր թէ ուսուցչական պաշտօն վարող կրօնաւորաց և մայրապետաց միահաղոյն պաշտօնանկութեամբ չատ մը դպրոցք առանց ուսուցչի պիտի մնային․ այլ որոշուած էր անոնց տեղ տակաւ աշխարհական ուսուցիչներ դնել ։ Բայց տակաւին կան 9 000 շրջանակներ, կամ Ֆրանսայի իբր մէկ քառորդն, որոյ քաղաքապետութիւնք կամ դպրոցական մարմինք այս աշխարհականացման գործն ի գլուխ չեն հանած։ Արդ ի Կրթական Ծրագրով այս բան պարտաւորիչ պիտի լինի այլ եւս Նախակրթարանաց մէջ կրօնաւորք և մայրապետք ուսուցչական պաշտօն չպիտի կրնան վարել այլ եւս։

Երեսփոխին վիճաբանութիւնք սաստիկ քրքրաշարժ տեսարանք կը ներկայացնէր որ Պ. Պիւֆէի պէս միապետական և կղերամիտ քաղաքագէտ մը կոչում կ'ընէր 1789ի Յեղափոխութեան արդիւնքն եղող «Մարդկային Իրաւանց Յայտարարութեան», որոյ մէկ հիմնական տրամադրութիւնն է ջնջել քաղաքացւոց մէջ հանրային պաշտօնավարութեանց մասին խտիր դնելու և ինչ ինչ դասեր այնպիսի պաշտօնավարութեանց անարժան հռչակելու հնամտութիւնք,—մինչ Պ. Կոպլէի պէս հանրապետական նախարար մը կը պնդէր թէ մանկանց դաստիարակութիւնն ապահովապէս չի կրնար վստահուիլ եկեղեցականներու ։ Փետր. 8ին Պ. Պարտու, Հանրապետական Նախկին Նախարար մը վերջին փորձ մ'ըրաւ պարտաւորիչ աշխարհականացման դէմ, առաջարկելով որ մէն մի քաղաքապետութիւն ազատ լինի իր մասին որոշում տալու թէ կ'ուզէ՞ պահել կրօնաւոր ուսուցիչները թէ ոչ։ Յայտնեց թէ, հակառակ պարագայի մէջ, Ֆրանսա, Պելճիոյ պէս, կրթական երկու ընդդիմադիր բանակներու բաժնուիլ կը պարտաւորի, և Առաջին Յեղափոխութեան սխալները կը կրկնուին ։ Պ. Տիտ, բողոքական Նախկին հովիւ մը, պաշտպանեց պարտաւորիչ աշխարհականացումը, պնդելով թէ կղերականք ազատ են ուրոյն դըպրոցներ հաստատելով մրցիլ կառավարական վարժարանաց դէմ։ Բայց ուրիշ բողոքական հովիւ մը, Պ. Բրէսանսէ, Պ. Պարտուի կարծիքը պաշտպանեց ։ Բայց Պ. Պարտուի բարեփոխումն 111ի դէմ 161 քուէով մերժուեցաւ, և պարտաւորիչ աշխարհականացումը քուէարկեցաւ 105ի դէմ 164 ձայնիւ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մալաթիոյ ազգային Վարչութեան կողմէ ի Պատրիարքարան հասած գիր մը կը ծանուցանէ թէ վիճակին Առաջնորդ Գեր. Սրապիոն եպիսկոպոս վախճաներ է յունվար 18ի չաբաթ օրն ։ Սուգարկաւորութիւնը կատարուեր է փառաւոր հանդիսիւ ի ներկայութեան կառավարական պաշտօնէից և վաշտ մը զօրաց։

Նոյն օրը վախճաներ է նաեւ տեղւոյն Տ. Յակոբ աւագ քահանայն։

Բերայի քարոզիչ Արժ. Ներսէս վարդապետ Արսլանեան երէկ, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Ս. Ոսկեբերան Եկեղեցին երթալով այցելութիւն տուաւ Գեր. Հայր Էնֆիէճեանի որ անկողնոյ կը ծառայէ ։

Մեզ կը հաղորդեն թէ Մխիթարեան Միաբանութեան հրատարակած ՍԻՍՈՒԱՆ, ՇԻՐԱԿ և այլ գրեանց Վարոբիտի էֆ.ի ձեռամբ գրաւումն, բարձրագոյն հրամանի մը համեմատ տեղի ունեցած է ։

Քաղաքական ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ օր, ժամ 6ին, ի Պատրիարքարան։

Կարճկանի Առաջնորդին, քահանայից և ի դիմաց գաւառին ազգայնոց՝ Բէյրիներու ստորագրութեամբ հանրագիր մ'ուղղուած է Խմբագրութեանս՝ յայտնելով թէ Արեւելքի 583 թուոյն մէջ «Պոլսոյ ի հայաբնակ գաւառս» խորագրոյն ներքեւ հրատարակեալ Թղթակցութեան այն մասն որ կը վերաբերի Խիզանու Ուսումնասիրաց ընկերութեան և նորա ընդհ. տեսչին, ինչ ինչ տեղեկութիւններ կը պարունակէ որք ուղղուելու կարօտ են։

Ստորագրեալք՝ իբր բարերարեալք յիշեալ Ընկերութեան, շնորհակալութիւն յայտնելէ յետոյ իրենց վարժարանաց բարեկարգութեան և ընդհ. տեսուչ Պ. Նահապետեանցի գործունէութեան համար, հետեւեալ կէտերը կը պարզեն։

Արեւելքի թղթակիցն ըսած էր թէ իւր Կարճկանի Եղեգիս գիւղի վարժարանն այցելած պահուն, Տեսուչն Աղթամար գնացած էր Ս. Կաթողիկոսին հետ խորհրդակցելու, Նարեկայ մէջ վարժարան մը բանալու համար, դասատուն ալ որսի գնացած էր, հետեւաբար ուսանողք ցրուած էին և այլն ։ Հանրագիրն ստորագրողք կը յայտարարեն թէ 1885 մայիս 14ին Պ. Նահապետեանց Խիզանու Ընկ. Գործադիր Ժողովոյ հրահանգով միայն այցելած է Աղթամարայ Ամեն. Կաթողիկոսին և Յակոբ Եպիսկոպոսին, ո՛չ միայն Նարեկայ մէջ վարժարան մը բանալու, այլ Խիզանի գաւառին մէջ Ընկերութեան ունեցած վարժարանաց թիւը կրկնապատկելու միջոցներուն վրայ պաշտօնապէս խորհրդակցելու համար ։ Այս առթիւ, կը յարեն թէ Արեւելքի թղթակիցը Եղեգիս հանդիպեր է մայիս 19ին, երեկոյեան ժամ 12 ի միջոցներն, երբ աշակերտք արձակուած էին, ըստ սովորութեան, և ո՛չ թէ «ցրուած» և թէ յաջորդ առաւօտուն, տակաւին դըպրոցին դռները չբացուած, նա մեկներ է գիւղէն ։

Հանրագիրն ստորագրողք ի վերջոյ կը յայտնեն թէ Եղեգիսի Հայերն բնաւ չեն հոգար Տեսչի և դասատուի ուտեստի ծախքերն, թէ իրենք երբէք այս անուամբ թանկ մը տուած չեն, և Տեսուչն ու դասատուք կ'ապրին ամենայն վեհանձնութեամբ չատ անգամ իսկ իրենք հիւրընկալելով գիւղացիս, թէ 1885 տարւոյ շրջանին մէջ այդ գիւղացիք խոստացեր են 300 դահեկան վճարել Խիզանու ընկերութեան, սակայն գիւղական կենաց բնական պատճառներով այդ գումարէն 60 դահեկանը միայն կրցած են վճարել ցարդ։

Բաբերդի Լուսոնք գիւղէն մայրաքաղաքս գտնուող պանդուխտ ազգայինք նամակաւ մը շնորհակալութիւն կը յայտնեն Ասիական ընկերութեան, որ ի մօտոյ տեղեկանալով յիշեալ գիւղի դպրոցին կարօտ վիճակին, 93 կտոր դպրոցական զանազան գրքեր և 3 տարուան Երկրագունդի ամբողջ թերթերը նուէր ղրկած է ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Յայտնի է արդէն որ Ազգային Պատրիարքարանի ծախքերն կը կատարուին Երեսփոխանական Ժողովոյ կողմէ քուէարկեալ Ելմտացոյցի մը համաձայն, որոյ մէջ նշանակեալ հասոյթից գլխաւոր աղբիւրն է ազգային կեդրոնական ընդհանուր տուրքն ։

Եթէ Ազգն առ ազգային ամեն անհատ պարտականութիւններ ունի զորս կը կատարէ Կեդրոնական Վարչութեան միջոցաւ, Ազգին անհատներն ալ՝ ըստ Սահմանադրական սկզբանց՝ առ Ազգն պարտաւորութիւններ ունին, որոց առաջինն է մասնակցիլ տրոք Ազգին պիտոյից պահանջած ծախքերուն, և սոյն օժանդակութեամբ դիւրութիւն ընծայել Ազգային Վարչութեան, որպէսզի կարենայ իւր ստանձնած պարտաւորութիւնները կատարել և հոգ տանիլ ազգային գաւառական, տեղական և անհատական գործոց բարւոք կարգադրութեան, գործեր՝ որոց համար ամենուստ ազգային պաշտօնական մարմինք և անհատք կը դիմեն անդուլ Ազգային Պատրիարքարանի, և որք խնամոց ու ծախուց կը կարօտին պարտ ու պատշաճ եղանակաւ լուծում և կարգադրութիւն ստանալու համար ։ Վարչութիւն մը որքան ալ անձնուէր ըլլայ և նախանձախնդրութիւն ունենայ իւր պաշտօնն արժանապէս կատարելու, երբ ամեն օր դրամական դժուարութեան հետ մաքառելու կ'ստիպուի իւր ամենէն անհրաժեշտ պէտքերն հոգալու համար, իւր իղձերն ու ջանադրութիւններն ապարդիւն մնալու կը դատապարտուին, և վարչական մեքենան՝ որու առանցքն է դրամն, կը մատնուի անշարժութեան։

Ազգային Վարչութիւնն քանի տարիէ ի վեր հաւաքիչներ կարգելով՝ դիւրութիւն ընծայած է ազգայնոց, որպէսզի կարենան ըստ ամէ հատուցանել իրենց ազգային տուրքն, և երբ անձնական գործոց համար դիմեն ի Պատրիարքարան, մէկ քանի տարիներու տուրքն միահաղոյն վճարելու դըժուարութենէն զերծ մնան, և թէպէտ հաւաքիչք անընդհատ կը դիմեն ազգայնոց ստանալու իրենց տուրքն, ըստ հրահանգաց որ տրուած են իրենց, վճարմանց մասին ամեն օրինաւոր դիւրութիւններ մատուցանելով, սակայն ցաւալի եղած է տեսնել որ այս տնօրէնութիւնն ալ փափաքուածին չափ չէ կրցած արդիւնաւոր լինիլ, որով մէկ կողմէ Ազգային Վարչութիւնը դրամական դժուարութեանց կ'ենթարկուի, երբ արդէն մեծ դժուարութիւնք կը շրջապատին զինքն իւր բազմահոգ պաշտաման մէջ, և միւս կողմէ չվճարողք իրենց պարտքը դիզելով՝ օր մը զայն միահաղոյն հատուցանելու հարկին և դժուարութեան ներքեւ կը մնան ։

Հետեւապէս Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովն ներկայ պաշտօնական ծանուցմամբ յորդոր կը կարդայ արդոյ ազգայնոց որ երբ հաւաքիչք դիմեն իրենց, յօժարակամ սիրով հաճին հատուցանել իրենց ազգային տուրքն և կատարել իրենց առ Ազգն ունեցած պարտաւորութիւնն ։

(ԿՆԻՔ)

3 Փետր. 1886

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՕՐԹԱԳԻՒՂԻ

Ազգ. Կեդրոնական Վարչութեան որոշման համաձայն և ըստ տրամադրութեան ազգային կանոնագրի, Օրթաքէօյի թաղեցի ազգայնոց կեդրոնական տրոց բաշխման գործողութիւնք կատարեցան խնամօք յատուկ մասնաժողովոյ մը ։

Սոյն տրոց համեմատական բաշխման մէկ ցուցակը Թաղիս Խորհրդարանը կը գտնուի ի տրամադրութիւն յարգոյ թաղեցւոց, որք ներկայ ազդարարութեանս թուականէն մինչ ցմէկ ամիս կրնան դիմել անդ և յետ քննութեան պատրաստեալ ցուցակին՝ ներկայել իւրեանց դիտողութիւնք, եթէ երբեք ունին ։

Այս պայմանաժամիս լրանալէն յետոյ, ոեւէ դիտողութիւն նկատի չպիտի առնուի ի փութացումն ազգային սոյն կարեւոր խնդրոյ կարգադրութեան։

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ
Ատենապետ — Վ. Ատենադպիր
Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ — Ս. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ
5/17 փետրուար 1886
Օրթաքէօյ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Արտաշէս էֆէնտի Դ. Կէօնճեան՝ գործակատար շոգենաւային Խայրիէի Ընկերութեան Ղալաթիոյ մասնաճիւղին նշանուեցաւ ընդ Օր Հերիքա Տ. Սարգսեանի՝ դուստր Արժ. Տ. Սահակ Քահանայ Տ. Սարգսեանի ։

Հանգուցեալ Կիւմիւշկերտան Մելքոն աղայի կենակից, և մայր Ռուբէն, Տիգրան և Գրիգոր Կիւմիւշկերտան Եղբարց

ՏԻԿԻՆ ՄԱՐԻՆՈՍ ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԵԱՆ

կնքեց իւր առաքինի կենաց ընթացքըն ի հասակի 75 ամաց, և փոխեցաւ առ Աստուած բարեպաշտ Հաւատով և Յուսով։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի այսօր, Չորեքշաբթի ի ժամ 8, փոխադրելով Հանգուցելոյն մարմինն իւր բնակարանէն ի Ս. Երրորդութեան Եկեղեցին Բերայի ։

Բերա, Սագըզ-Աղաճ,
Սագըզ փողոց Թիւ 19.
5 Փետրուար 1886

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արչիպիլագոսի կղզեաց կուսակալ անուանեցաւ Վանայ նախորդ կուսակալ Աքիֆ փաշա ։

Ռուս կառավարութիւնը տակաւին պատասխանած չլինելով այն ծանուծագրոյն որով Բ. Դուռը բացատրութիւններ տուած էր Թուրքօ-պուլկարական Դաշնագրոյն ինչ ինչ կէտերուն նկատմամբ, Բ. Դռնէն հեռագրաւ հրահանգ տրուեցաւ Բեդրսպուրկի օսմանեան դեսպան Շաքիր փաշայի, որպէս զի այդ պատասխանին պէտքը զգացունէ Չարին կառավարութեան ։

Շաքիր փաշա այս նպատակաւ հարկ եղած դիմումն ըրած է Ռուսիոյ Արտաքին գործոց Նախարարութեան մօտ ։

Այս յապաղումէն Թուրքի կը հետեւցունէ թէ, թէ և Ռուսիա չպիտի բաժնուիր Տէրութեանց ընդհանուր համաձայնութենէն, սակայն կ'երեւի թէ խնդիրը Դեսպանախորհրդոյ մը պիտի յանձնուի ։

Գերմանական, աւստրիական և պարսկական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ ։ Պ. Բատոլիձ տեսակցեցաւ նաեւ Արտաքին գործոց Նախարարի խորհրդական Վսեմ. Տատեան էֆէնտիի հետ։

Ըստ տեղեկութեանց Էնտէփանտանս Ռումէն լրագրոյն, խաղաղութեան կնքման համար Մաճիտ փաշայի կողմէ առաջարկեալ առաջին յօդուածն՝ որ ընդունուած է հինգշաբթի աւուր նըստին մէջ, կը վերաբերի պայմանագիր կողմանց հողային անվթարութեան ինչպէս նաեւ ապստամբներու կացութեան զոր ընդհանուր ներում մը կամ նմանօրինակ տնօրինութիւն մը պիտի կարգադրէ ի վերջոյ ։

Յաջորդ օրը, ուրբաթ, պատուիրակք պաշտօնական նիստ չեն գումարեր, այլ նախապատրաստական խորհրդակցութիւն մ'ունեցեր են միւս յօդուածոց վրայ որոց ընդունելութիւնը կ'երեւի թէ մինչեւ մէկ աստիճան դժուարութեան պիտի բաղխի ։

Մոնիթէօր Օրիանթալ, իւր մասնաւոր տեղեկութեանց յենլով, կը ծանուցանէ թէ խաղաղութեան պայմանագրոյն երկու կէտերն՝ որոց վրայ պատուիրակք համաձայնած են, մեծ կարեւորութիւն մը չունին ։

Առաջին կէտն է եղեր սա պարտաւորիչ նախադրութիւնը «յանուն Ամենակալին Աստուծոյն, և այլն» ։

Երկրորդ կէտը կը վերաբերի պուլկարօ-սերպիական սահմանագլխոյն, որ այն վիճակին մէջ ընդունուեր է ինչպէս որոշուած էր Պերլինի Դաշնագրով ։

Բանակցութիւնք պիտի կատարուին այժմ պատերազմական տուգանաց խնդրոյն վրայ ։

[illegible] բացարձակապէս կը հերքէ Ղալաթիոյ թերթի մը տուած այն լուրը թէ Աղեքսանդր իշխանն օսմ. զօրք խնդրած է կայս. կառավարութենէն ։

Փիլիպպէէն կը գրեն փետր. 1/13 թըւով թէ այլ եւս Աղեքսանդր իշխանին Սոֆիայէ մեկնելու խօսքը չլինիր։ Կը կարծուի թէ պաշարման վիճակը պիտի վերցուի մարտ 1ին, այդ թուականին երեսփոխանական ընդհանուր ընտրութիւնք պիտի կատարուին և յարտասովոր նիստ պիտի գումարի Պուլկարիոյ ազգային ժողովն որոյ պիտի ներկայացունէ Աղեքսանդր իշխանն Բ. Դրան հետ իւր ուղղակի գոյացուցած համաձայնութիւնն ։

Հօպարթ փաշա երէկ Իզմիտ գընաց, ուր ծովառմբակիր շոգենաւուց փորձերուն ներկայ պիտի գտնուի մէկ շաբաթի չափ ։

Նախորդ թուով մը ծանուցինք կայսերական կառավարութեան այն որոշումը թէ օսմանեան երկիրներու մէջ արհեստով զբաղող և զբաղիլ ուզող պարսկահպատակք, օսմանեան հպատակաց նման պիտի վճարեն բոլոր օրինական տուրքերն և ի պահանջել հարկին պիտի հպատակին օսմանեան դատարանաց և պաշտօնէից ։ Այս առթիւ Թուրքի կ'ըսէ թէ «այս խնդիր, որ հիմնական կարեւորութիւն մը չունի, սկսած է կարգադրուիլ Արտաքին գործոց նախարարութեան և պարսկական դեսպանատան միջեւ հաշտարար եղանակաւ մը ։»

Իտալական դեսպան Քորթի կոմս այսօր կը մեկնի մայրաքաղաքէս Մարսիլիոյ շոգենաւով։

Բարձր. Մեծ-Եպարքոսի կողմէ՝ Թարգման Վէքիլ էֆէնտի և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին կողմէ Թարգման Միքայէլ էֆէնտի, շոգենաւ երթալով բարի երթ պիտի մաղթեն Վսեմ. դեսպանին ։

Ներքին գործոց Նախարար Վսեմ. Միւնիր փաշա, որ ինչպէս ծանուցինք, անձնական տկարութեան պատճառաւ երկու օրէ հետէ իւր ապարանքէն դուրս չէր ելած, երէկ մինչեւ Գուզկունճուգ եկեր, բայց դարձեալ տկարութիւն զգալով ապարանքը վերադարձեր է։ Կը յուսացուի սակայն թէ Ն. Վսեմութիւն կարենայ Բ. Դուռն երթալ այսօր։

Մայրաքաղաքս հասած մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սելանիկի ռուսական ընդհանուր հիւպատոս Պ. Ժագոպսըն մեռեր է։

Արքունի Նաւարանին մէջ շինուած ծովառմբակիր շոգենաւակաց մին աւարտած լինելով, փորձը պիտի կատարուի ի մօտոյ։ Արքունի Նաւարանի մէջ պիտի շինուին նաեւ տասնի չափ ուրիշ ծովառմբակիրք ։

Կրթական Վսեմ. Նախարարին նախագահութեամբ կազմեալ Բէժիի յանձնաժողովն երէկ դարձեալ ի նիստ գումարեցաւ Կրթական պաշտօնատան մէջ ։

Սերպիական դեսպան Պ. Կրուիչ և պուլկարական պատուիրակ Պ. Զանոֆ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ ։

Աւստրիոյ Կայսեր եղբայր Շառլ Լուի արշիդքսին որդի Օթոն արշիդուքսն ի մօտոյ ուղեւորութիւն մը պիտի ընէ յարեւելս ։ Ն. Վսեմութիւն Թրիէսթէէն ճամբայ ելած է և Եգիպտոս, Պէյրութ, Եաֆա ու Երուսաղէմ երթալէ յետոյ մայրաքաղաքս պիտի գայ ։

Առեւտրական և Երկրագործական նախարարութեան Մէքթուպճի Սալիհ Միւնիր պէյ՝ յախճապակեայ ամեն տեսակ ամաններու պատրաստութեան յատկացեալ գործարանի մը հաստատման մենաշնորհն ստացած է կայս. կառավարութենէն ։ Այս գործարան պիտի հաստատուի Վոսփորի ասիական եզերաց վրայ, Չպուքլու կոչուած տեղն կամ շրջակայքը ։

Վեհ. Սուլթանը բարեհաճած լինելով իւր բարձր պաշտպանութեան ներքեւ առնուլ այս գործարանը, քանի մը առանձնաշնորհումներ տուած է Միւնիր պէյի․ օրինակի համար այդ գործարանի արտադրութիւնք մաքսային տուրք չպիտի վճարեն տասն եւ հինգ տարի, այնպէս որ ազատ կերպիւ պիտի ղրկուին թէ օտար երկիրներ և թէ Թուրքիոյ զանազան գաւառները։ Նմանապէս գործարանին պիտոյից յատկացեալ բոլոր մեքենայք ու գործիքներն առանց մաքսի Կ. Պոլիս պիտի ներմուծուին։ Արտօնատէրն ազատ է նաեւ ձրիաբար առնուլ պարապ հողերու մէջ գտնուած կիճերն, իւր գործարանին բաղադրութեանց համար։

[illegible] իւր մասնաւոր տեղեկութեանց յենլով կը ծանուցանէ թէ Արեւելեան Րումէլիի իշխանութիւնք որոշած են յիշեալ գաւառը ներմուծելի օսմանեան և այլ ապրանաց համար մաքսային տուրք առնուլ ։

Ֆար տիւ Պոսֆօրի մէջ կը կարդանք․

«Բ. Դուռն հրամայեց իւր դեսպանատանց ի Փարիզ և ի Լոնտոն որպէս զի առանց պայմանաժամի կնքոյ ներքեւ առնուն մայրաքաղաքիս հանրածանօթ Համամճեան վաճառատան՝ որ սնանկացաւ քանի մ'ամիս առաջ՝ մասնաճիւղերն։ Յիշեալ դեսպանատունք միեւնոյն ժամանակ հրաման ստացած են Կ. Պոլիս ղրկել այդ մասնաճիւղերու բոլոր հաշուետումարներն ու թուղթերը։»

Հեռագրական և Թղթատարական վարչութիւնն, այս աւուր Թուրք լրագրաց միջոցաւ պաշտօնապէս կը ծանուցանէ թէ նկատելով որ օսմանեան երկիրներու մէջ [illegible] անունով մի քանի տեղեր կը գտնուին որով անուանց նմանութեամբ հասցէներու դժուարութիւնք և սխալմունք կը պատահին յաճախ, որոշուած է որ յետ այսորիկ Ադրիանուպոլսոյ կուսակալութեան տակ գտնուած [illegible] համար ուղղուելիք հեռագրոց և նամակաց հասցէն պէտք է լինի [illegible]։

Գահիրէէն առնուած նամակներ կը ծանուցանեն թէ Լոնտոնէն հրաման ղրկուած է անգլօ-եգիպտական բանակին՝ Ասուան վերադառնալ, սակայն ոչ փութով և մեծ զգուշութեամբ, որպէս զի նահանջումն ըստ կարելւոյն երկար տեւէ և աչքի չզարնէ։ Արդէն զինուորական իշխանութիւնք արտաքուստ ոչինչ կը յայտնեն այդ մասին և կը կեղծեն թէ անգիտակ են վերջնական նահանջման որոշման որ տրուած է Անգլիոյ պատերազմական նախարարութեան կողմէ ։

Գահիրէէ անգլ. պատուիրակ Սըր Հէնրի Տրըմընտ Ուոլֆ այս օրերս ծածկագիր հեռագիր մ'ստացեր է Լոնտոնէն, և կը կարծուի թէ այս հեռագիր ո՛չ այլ ինչ է, բայց եթէ նորա յետս կոչման հրամանն։

Աթէնքէն կը ծանուցանեն թէ Միջերկրականի ֆրանսական նաւատորմի հրամանատար Մարքիզ ծովակալն հեռագրաւ հրաման ստացեր է Պիրէոնի առջեւ պատրաստ սպասել ուղեւորելու համար իրեն ցոյց տրուելիք վայր մը ։ Էֆէմէրիս լրագիրը կ'ըսէ թէ այդ վայրը Կրետէ կղզին չէ ։

Անգլիական լրագրի մը Սոֆիայի թղթակիցը կ'իմանայ թէ պուլկար կառավարութիւնը մտադիր է յառաջիկային քանի մը սպայներ ղրկել յԱնգլիա, իրենց զինուորական կրթութիւնն ամբողջացնելու համար։

Պելկրատէն կը հեռագրեն թէ սերպ ոստիկանութիւնն այդ քաղաքէն արտաքսեր է զՊ. Բավլովիչ՝ Քարատաղի կրթական նախարարն՝ որ բազմաթիւ Քարատաղցոց հետ Հունգարիոյ հարաւային կողմերը շրջելէ յետոյ, անցեալ կիւրակէ Պելկրատ հասնելով, երկու ժամու չափ տեսակցութիւն մ'ունեցեր է ռուսական դեսպան Պ. Բէրսիանիի հետ։

Մոսկուայի լրագրոյն տեղեկութեանց նայելով, Աղեքսանդր իշխանն անցեալ հոկտեմբերին Դանուբի նաւարկութեան յատկացեալ պուլկարական նաւուց հրամատարութիւնն յանձներ է երկու ռուս գաղթականաց՝ Լաթոֆի և Սիպիրիաքոֆ՝ որք ընկերվարական յեղափոխական կուսակցութեան կը պատկանին։ Այս ծովային նախորդ սպայք տակաւին կը հրամայեն եղեր պուլկարական նաւատորմին ։ Ռուսական լրագիրը կը պարսաւէ այս առթիւ Իշխանին ընթացքը։

Յոյն թերթերը կը ծանուցանեն թէ հանգուցեալ Էմ. Բարաքաքիի այրին՝ որ վերջերս մեռաւ ի Մարսէյլ, 100,000 ֆրանքի գումար մ'և 25,000 ֆրանք արժողութեամբ տուն մը կըտակած է ի նպաստ Սելանիկի յունական հիւանդանոցին ։

Սպարապետի Դրան կողմէ կարգեալ հանգանակիչ Յանձնաժողովն ի նպաստ կայս. զօրականաց 1885 հոկտ. 29 էն ց31 յունվար 1886 իւր ձեռամբ կատարուած հանգանակութեանց ընդհանուր հաշուեցոյցն հրատարակած է, ուստից կ'երեւի թէ հանգանակեալ դրամն է 772,337 ղրուշ, և նուիրեալ նիւթեղէններու արժէքը կը հասնի 269,096 ղրուշի ։ Այդ միջոցին, Յանձնաժողովն ընդամենը 1,896,140 ղրուշի հանդերձեղէն ղրկած է կայս. բանակաց ,

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
Ի ՆՊԱՍՏ ԱՍՈՐՒՈՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ի նպաստ Բերայի Ասորւոց երկսեռ վարժարանին դիմակաւոր և անդիմակ Պարահանդէս մը պիտի տրուի փետրուար 18ի երեքշաբթի գիշերը Թէփէ-Պաշիի Թաղապետական Թատրոնին մէջ, բարձրաստիճան անձի մը հովանաւորութեան ներքեւ։

Այս նպատակաւ Բ. Դրան և օտար Դեսպանատանց պաշտօնատարներէ, ու Բերայի բարձր դասու պատկանող անձերէ բաղկացեալ կարգադիր մասնախումբ մը կազմուած է, որ կ'աշխատի Պարահանդիսին յաջողութեան ու շքեղութեան համար։

Ինչպէս որ այլեւայլ ազգաց բարենպատակ հաստատութեանց ի նպաստ տրուած պարահանդէսք կ'արժանանան մայրաքաղաքիս ազնիւ հասարակութեան քաջալերանաց և ընդունելութեան, յուսալի է որ Ասորւոց վարժարանին ի նպաստ կազմուելեալ Պարահանդէսն եւս գտնէ նոյն համակրանքն ու ընդունելութիւնը։

Տոմսակները կը վաճառուին Բերա, Կալաթա-Սէրայի դէմ, սեղանաւոր Նըշան էֆ.ի քով, Պոլիս, Մահմուտ-Փաշա, Սուլթան-Օտալար խանը գտնուող Սիւրեանի Ջատէ Տաուտ և Սելիմ էֆէնտիներու քով, Ղալաթիա, Եիւքսէք-Գալտըրըմ, Գայթաքճը-օղլու Արիկ էֆ.ի քով, ինչպէս նաեւ Պարահանդիսի գիշերը Թատրոնին դուռը։

ԼԱ ՄԱՆՀԱՅՄ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴԴԷՄ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԱՑ
Ընդհ. Գործակալութիւն Պոլսոյ
Տ. Լէզէ եւ Վէլէօր որդի

Կ'ապահովագրեն ամեն նաւեր և ծրարներ որք կը պարունակեն դրամ, թանկագին մետաղ, արժէթուղթ, դրամատոմսք, գոհարք եւ, յանձնուած ամեն ազգի թղթատարական Վարչութեանց կամ փոխադրութեան ընկերութեանց ։ [illegible] 30,500,000 ֆրանք։

Կ'ապահովագրեն շոգենաւով, կառախմբով, եւ մեծ ու փոքր երթեւեկութիւն ընող առագաստանաւերով փոխադրեալ ապրանքներ ։

Գիներն և պայմաններն յոյժ չափաւոր ։
Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել առ

Պ. Պ. Տ. Լ. ԵՒ ԼԻԲՃ ՈՐ ՈՐԴԻ
Պոլսոյ ընդհանուր գործակատարք «Մանհայմ» Ապահովագրական ընկերութեան ։

ՄԻՒՔԷԼԼԻՄ

Կայսերական Միւլքիէ վարժարանին Ֆրանսերէնի և Սուլթանիէ վարժարանի Թիւրքերէնի ուսուցիչ Ալի Նազիմա էֆէնտիի սոյն դասագիրքն, որ նպատակն է Անի ոճով Ֆրանսերէն ուսուցանել Թուրք աշակերտաց, կու գայ մեծ պակաս մը լնուլ Թուրք վարժարանաց մէջ։ Հեղինակն յաջողած է լիովին ըմբռնել Անի մեթոտն և զայն յարմարեցնել Թուրք լեզուին։ Հրահանգներն, աստիճանաբար դասակարգեալ, հետըզհետէ կը բացատրեն Ֆրանսերէնի դժուարութիւնները։ Այսու է որ այդ դասագիրքը կոչուած է ընդունուիլ պետական ամեն վարժարանաց մէջ։ — Գիրքն հրատարակուած է Հայ Գրաչարաց Միութեան տպարանէն, որ մի անգամ եւս փայլուն ապացոյց մը կուտայ տպագրութեան մէջ բռնած առաջնակարգ դիրքին ։—Գինն է 10 ղրուշ։

ՇԱ՞Հ ԹԷ ՎՆԱՍ

Սինկէրի ձեռագործի կարի մեքենայ մը գնելով, շաբաթական վճարման դիւրութեամբ, մարդ կարող է մեծ շահ մ'ընել արդարապէս ի գործ դրուած աշխատութեան արդեամբ, այնպէս որ վերջ ի վերջոյ մարդ շահ մը ձեռք ձգած կը լինի փոխանակ ծախք մ'ընելու ։ Առ այս կը բաւէ դիմել Սինկէրի գործարանին մթերանոցաց ի Բերա, ի Ղալաթիա, ի Պոլիս, որոց հասցէները նշանակուած են մեր չորրորդ երեսն յաճախ հրատարակեալ ծանուցման մէջ ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՔ ՑԱՂԹԱԿԱՆ

Փարիզ, 15 փետր.

Արտէշի, Դորտոնյի, Լանտերու և Լոզէրի նահանգաց ընտրողներն երէկ հրաւիրուած էին իրենց երեսփոխաններն ընտրելու համար, ըստ որում անցեալ հոկտեմբեր 4ի ընտրութիւններն անվաւեր վճռուած են կղերական ազդեցութեամբ ի գործ դրուած ըլլալու պատճառաւ։

Այս նոր ընտրութիւնք տեղի ունեցան երէկ և արդիւնքը ձեռք բերուեցաւ առաջին քուէարկութեամբ։

Հանրապետական ընտրելիք ընտրուեցան վերոյիշեալ չորս նահանգաց մէջ։

Արտէշի նահանգն ընտրեց 6 երեսփոխան, Դորտոնյա՝ 4, Լանտերն՝ 5 և Լոզէր՝ 3, ընդ ամենը 18 երեսփոխան, որով Հանրապետականք շահեցան 18 աթոռ և միապետականք կորուսին նոյնչափ աթոռ։

Լոնտոն, 15 փետրուար

Լոնտոնի օսմանեան նախկին դեսպան Մուզուրուս փաշա այս առաւօտ Պոլիս մեկնեցաւ։

Փարիզ, 16 փետրուար

Քանի մը լրագիրք գրոյց մը կը յիշատակեն թէ Գլյօ զօրավարը Բեգրապուրկի Ֆրանսական դեսպան պիտի անուանի փոխանակ Աբբէա զօրավարին։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 5 փետրվար

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

Ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	111
3 » » » (վճռ.կ.ն.)	110 5/8
3 » Բարիզի » (պանքայի)	22 70
3 » » » (վճռ.կ.ն.)	22 77 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

	Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Մնաց. Դ. Սէրի Գ. Կ.)	16 17
Զօրաւոր գոցուելէն վերջը »	16 18
Բերայի մէջ	— —
Առաւօտուն բացուեցաւ »	16 13
Բարձրագոյն գին	16 13
Նուաստագոյն	16 12 1/2
Կէս օրին	16 12 1/2
Փոխառութիւն 1858) 1862) Ա. Սէրի Դ. Կ.	26
» 1860) » 1863) Բ. » Դ. Կ. »	16
» 1872) » 1865) » 1869) Գ. » Դ. Կ. Ա. 1873)	16 13

ԻՒՆԻՖԻԷ Եգիպտական

Երէկ իրիկուն գոցուեցաւ	71 25
Այս առտու բացուեցաւ Դ.Կ.	73 10
Կէս օրին	73 10

ԲԱԺՆԵՏՈՄՍ

Սօսիէթէ Ժէնէրալ .... Գ. Կ. Անգ. Լր.	3 18
Քրէտի Ժէնէրալ » » Օսմ. »	6
Գամպ տը Գօնա » » » »	4
Սոս. Շանժ է վալէօր » » » »	3 15
Թրամուէյ » » »	285
Ռումէլիի երկաթուղի .... Ֆր.	36 25
Օպլիգասիօն դը Բրիօրիթէ »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի »	47

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 16 փետրուար, ժամ 5 վայր. 15 երեկ.

Անգլ. քօնսօլիտէ	101
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	14 3/4
» » » գոցուեցաւ	14 11/16
» » » Ա.	26
» » » Բ.	16 1/4
» » » Գ.	14 5/8
Օթօման 1871	68 3/4
Փոխառութիւն 1877	82 1/4
Գանք Օթօման	10
Ռուսական փոխառ. 1873	98 3/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	66 1/8
» առանձ. (բրիվիլէժիէ)	91 5/8
Տայրա Սանիէ	74
Դոմանիալ (փոխառ. Ռօչիլտ)	92 1/4
Հունգարական պարտաթուղթ 4 0/0	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 374

Վիէննա, 16 փետրուար, ժամ 1 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	127 05
Օսմանեան երկաթուղի	18

Բարիզ, 16 փետրուար, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 62 1/2
» » 3 0/0	81 97 1/2
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	14 90
» » գոցուեցաւ	14 82 1/2
» » Սէրի Բ.	— —
» » Գ.	14 80
Օսմանեան երկաթուղի	35 10
» Բէժիի բաժնեթուղթք	— —
Գանք Օթօման	501 25
Գրէտի Լիօնէ	— —
» Ֆօնսիէ	1338 75
Բաժնեթուղթ Լիօնի	1265
Սուէզի ջրանցք	2166 25
Ռուսական 5 0/0 1877ի	100
Իտալական Ռանթ	97 65
Եգիպտական միացեալ	333 75
Սպանիական (արտաքին)	56 1/2
Բրիօրիթէ Թիւրք	361 25
5 0/0 Հելլէնական	268 75
Չէք Լոնտրայի վրայ	25 18

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 16 փետրուար, ժ. 10 վ. 30 երեկո.

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 57 1/2
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ	14 80
Եգիպտական	332 50

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ»Ի

ԼՈՆՏՈՆ, 25 յունուար

Մէկ տարիէն աւելի է որ Կիլիկիոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսն ի Հնդկաստան ուղարկել է իւր ձեռնասուն վարդապետն՝ Ներսէս Մանիսալեան, որոյ եպիսկոպոսութեան աստիճան շնորհելով յիւր անուն կոչած էր Մկրտիչ եպիսկոպոս։

Սորա ուղեւորութեան պատճառն, ըստ յայնժամ, թէ Հաճնի և Զէյթունի հրկիզեալ ազգայնոց համար դրամ պիտի հաւաքէ. այն ինչ Հնդկաստան Կիլիկիոյ աթոռին վիճակը չլինելով՝ Մկրտիչ կաթողիկոս չէր կարող առանց Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետի հաւանութեան նուիրակ ղրկել նորա սեպհական վիճակի մէջ։

Մկրտիչ եպիսկոպոս Մանիսալեան կը ժամանէ ի Կալկաթա, և մի ժամանակ տեղւոյն ազգայնոց հիւրանոցի մէջ մնալով, կը ծանօթանայ և կը մտերմանայ Թովմաս Մելքում անուն պարոնի հետ, որ Կալկաթայի Հայոց եկեղեցւոյն հռչակաւոր եկեղեցպանն է, անկախ և անպատասխանատու ումեք, և նորա միջոցաւ ընդունելութիւն գտնելով մինչեւ իսկ եկեղեցւոյ մէջ առաջնորդական աթոռի վերայ բազմելու արտօնութիւն կ'ստանայ։

Սա այն եկեղեցպանն է որ Ասպահանի և Հնդկաստանի առաջնորդ Փիլիպէսի Գրիգորիս եպիսկոպոսն, երբ գնաց ի Կալկաթա, հակառակ ժողովրդեան բողոքմանց՝ որք հարկադրուել էին մինչեւ իսկ տեղւոյն կառավարութեան դիմելով արտաքսել զայն իւր քմահաճ պաշտօնավարութենէն, հաստատուեցաւ, և անգլիական կառավարութեան օրինօք կարգեցաւ անկախ հոգաբարձու բովանդակ ազգային կալուածոց, և եկեղեցպան Կալկաթայու և Չինսուրու եկեղեցեաց Հայոց, ըստ խնդրոյ և պահանջման Գրիգորիս եպիսկոպոսի, որ սերտ յարաբերութիւն ունեցած էր Թովմասի հետ զանազան ազգային կտակներու և այլ գործողութեանց շահեկանութեամբ և որոյ դէմ այժմ ժողովուրդը չէ կարող բողոքել կառավարութեան՝ որ զեպիսկոպոսն միայն կը ճանաչէ տէր և իշխան եկեղեցական գործոց։

Սա այն եկեղեցպանն է, որ իւր գործոց դէմ գլխաւոր գիտող, և ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ ոտնձգութեանց հակառակող տեսնելով Կալկաթայի բարեհամբաւ Աւագերէցն խաչկիր Տէր Յովհ. Խաչիկեան, գիտուն, փորձառու և Հայաստանեայց հաւատոյ և աւանդութեանց նախանձախնդիր և հաւատարիմ քահանայն, բանադրել տուեց Գրիգորիս եպիսկոպոսին, և 75ամեայ ծերունին զրկեց բոլոր հոգեւորական պաշտօնավարութենէն և արդ մերձ տասն տարի է, որ այնպիսի մի արդիւնաւոր քահանայն կապեալ կաշկանդեալ կը մնայ ի մեծ ցաւ իւր բազմաթիւ ծանօթից։

Եւ թէպէտ Տ. Յովհաննէս Խաչիկեան թէ՛ Հոգելոյս Տ. Գէորգ Կաթողիկոսին և թէ՛ Էջմիածնի Սինոդին, և թէ՛ Տ. Ներսէս Հոգելոյս Պատրիարքին բողոքեց այս անիրաւ կապանաց դէմ, բայց Գրիգորիս եպիսկոպոս մի կողմէ, և Թովմաս Մելքում միւս կողմանէ զանազան չարահնար դարձուածներով արգելք եղան արդարութիւնն յերեւան ածելու, զոր երկար կը լինի պատմել։ Իսկ այժմու Վեհ. Հայրապետը կը լսեմք թէ՝ խղճալով և գթալով բազմաչխատ քահանային վերայ, խիստ քննութեան ենթարկած է խնդիրն, և յոյս կայ որ այս անգամ այլ ևս արդարութիւնն յաղթող պիտի հանդիսանայ, և Գրիգորիսի և Թովմասայ գաղտնի մեքենայութիւնք յերեւան պիտի ելնեն։

Արդ սոյն եկեղեցպանը՝ Մանիսալեան Մկրտիչ եպիսկոպոսի հետ ևս մտերմանալով՝ կ'ասեն թէ՝ իւր նպատակն է սովալ սպառնալ Գրիգորիսի դէմ, որ չլինի թէ Վեհ. Հայրապետէն ակնածելով բանադրանքը լուծելու հակամիտի, ապա թէ ոչ, ո՛չ Նոր-Ջուղայի Առաջնորդին, և ո՛չ ամենայն Հայոց Հայրապետին իրաւասութիւնը պիտի ճանաչէ, այլ այս նոր եպիսկոպոսով պիտի լինի առանձին տէր և հրամանատար Եկեղեցւոյն Հայոց, որոյ ժողովուրդն յուսահատեալ արդէն օր ըստ օրէ կը դիմէ ի կրօնափոխութիւն։ Այս կարծիք դժբաղդաբար իրականութիւն գտնելու վրայ է այժմ։ Քանզի Մանիսալեան եպիսկոպոսը Թովմասու խորհրդով իւր հետ տարած փոքրաւորը Կալկաթայի եկեղեցւոյն մէջ վարդապետ ձեռնադրելէ զկնի, մի օր յանկարծ կը դիմէ իւր նոր վարդապետով Անգլիացւոց եկեղեցին, և հրապարակաւ քարոզ խօսելով կը յայտարարէ թէ ինքն և վարդապետն ընդունելով Անգլիական եկեղեցւոյ դաւանութիւնը միացած են նորա հետ։ Եւ այսպէս կը հաղորդակցի նոցա եկեղեցական արարողութեանց, և պայմաններ կը դրուին, որք տակաւին անծանօթ կը մնան։ Բայց սա յայտնի իրողութիւն է, որ Կալկաթայի անգլիական լրագիրները ցնծութեամբ հրատարակեր են զայս միութիւն, յորոց քաղելով և տեղական լրագիրք, հռչակեր են ի սփիւռս աշխարհի։ Կը ցաւիմք որ այս լրագիրներէն մի օրինակ տակաւին ձեռքերնիս հասած չէ, սակայն լսել եմք թէ Վեհ. Կաթողիկոսին զրկուեր են Լոնտոնի Հայոց ձեռամբ, որպէս զի Նորին Վեհափառութիւնը տեղեկութիւն ստանալով դարման տանի այս նոր պառակտման, որ ի շնորհս գերածայր խոհեմութեան Գրիգորիս եպիսկոպոսին Ջուղայու, իւր հաւատարիմ խորհրդականի ձեռամբ տեղի կ'ունենայ։

Իսկ գալով Կիլիկիոյ Մկրտիչ Կաթողիկոսի, խորին ցաւօք սա միայն կ'ըսեմք թէ բաւական չէին իւր բացած վէրքերն և պատառման ձեռնարկներն ընդ մէջ Կ. Պոլսոյ և Կիլիկիոյ ազգային յարաբերութեանց, բաւական չէր այլ ումն Սսեցի Սէֆէրեան Մկրտիչ եպիսկոպոսի դիմումն յեկեղեցի Անգլիացւոց, և յանուն Հայոց Ազգի դրամ հաւաքելով, եկեղեցի կազմելու գայթակղութիւնը, նոր և զզուելի գայթակղութիւն մ'ևս աւելցուց իւր այս Նոր Մանիսալը Մկրտիչով։ «Վա՛յ մարդոյն այնմիկ յորոյ ձեռն գայցէ գայթակղութիւն»։

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետ Տ. Տ. Մակար Ս. Կաթողիկոսի հեռատես և իմաստուն կառավարութենէն յոյս մեծ ունիմք, որ Հնդկաստանի Հայոց մէջ տասը տարիէ ի վեր նիւթուած չարութիւններն ի նիւթական և ի բարոյական կործանումն ազգին, այլ ևս վերջ կը գտնեն ամեն մասամբ։

* * *

ԻՇԽԱՆ (2

ՌՈՒՍՏԱՄ ՄԱԴԱԹԵԱՆ

Իշխան Ռուստամ Մադաթեանը մի հասարակ գիւղացու զաւակ էր, Մելիք-Շահնազարեանների հպատակներից։ Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Ջիւմշիւդը և մի քանի ուրիշ Մելիքներ գնում են Պետերբուրգ-Պօղոս կայսեր ժամանակ-իրանց հըպատակութիւնը նորան անձամբ հաւաստելու համար։ Մադաթովը այդ ժամանակ 8-9 տարեկան երեխայ էր և մայրը Մելիք-Շահնազարեանց հացթուխը։ Որովհետեւ Մելիքների կեանքը և նոցա յարաբերութիւնները իրանց հպատակների հետ պարզ, ազատ և նահապետական են եղած-այժմեան Չէրնօգորցոց իշխանի և վոյեվոդների պէս-ուստի տան ծառաները և սպասուհիք նկատուած էին ինչպէս գերդաստանի հարազատ անդամներ. մանաւանդ յարգի պիտի լինէր հացթուխը, որի գործը վերաբերվում էր տան մէջ սրբօրէն պաշտված լիութեան՝ հացին։ Տեսնելով Ջիւմշիւդը, որ իրանց հացթուխի սիրեցեալ զաւակը լաց է լինում իր յետեւից, նորան եւս վեր առած տանում է Պետերբուրգ, ուր ընդունվում են հայ Մելիքները իշխանավայել հիւրասիրութեամբ։ Արքունեաց մէջ կարծում են Ռուստամին հայ պատուիրակներից մէկի զաւակը, որով առաջարկում են նորան՝ մնալ Պետերբուրգում, ուսում ստանալու համար։ Ռուստամը մնում է և ընդունվում կայսերական մանկլաւիկների (պաժ) վարժարանը, որը մինչեւ հիմայ դեռ կայ, նոյն անունը պահելով։ Որովհետեւ Մելիքներին իշխան են ճանաչում, այդ պատճառաւ Մադաթովին էլ Կնեազի տիտղոս են տալի. հետեւաբար այդ ազնուապետական մեծաշնորհը նա չէր առած պատերազմում, այլ գտած էր Մելիք-Ջիւմշիւդի շնորհիւ, որն ցոյց էր տուած նորան իբր իր ազգական։

Գ. Րաֆֆին Խամսայի Մելիքութեանց մէջ, ուրիշ կերպ է պատմում Մադաթովի Պետերբուրգ ընկնելը։ Ըստ նորա՝ Մադաթովը Մելիք-Շահնազարեանց ջորեպանի տղան էր, որը 14 տարեկան հասակի մէջ, գլուխ վեր առած, փախչում է տանից։ Ռուսաստան գնալիս երբ հասնում են Մելիքները Հաժտարխան, մէկ էլ տեսնում են, որ իրանց ջորեպան Գիքի (Գրիգոր) տղան այս տեղ է, ուր մի գինեվաճառի մօտ մնալով բաւական ռուսերէն է սովորել։ Իրանք, Մելիքները, բնականաբար այդ լեզուն չիմանալով, վեր են առնում Ռուստամին հետները, ճանապարհին թարգմանի տեղ գործածելու նպատակաւ։ Այսպէս, Մելիքները աչքում հազիւ մի մժեղի չափ կշիռ ունեցող Գիքի տղայ Ռուստամը, մնում է Պետերբուրգ և դառնում այն հռչակաւոր զօրավարը, որին արդէն տեսանք։ Ճիշդ նոյն ճանապարհով և նոյն Հաժտարխան քաղաքից է ընտրել բաղդը Բօնապարտի անուանի օգնական ու Նէապոլիտանի թագաւոր իշխան Մուրատին, որի հայ լինելու մասին, Կովկասեան փոխարքայի առաջ Լազարեվի տուած վկայութիւնները մէջ կը բերենք մի այլ առթիւ։

Ինչ և իցէ, բաղդը այնպէս է տնօրինում Մադաթովի վիճակը, որ լինելով Մելիքների ջորեպանի կամ հացթուխի զաւակ, ճանաչվում է իշխան, իսկ Մելիքները, պաշտօնական վաւերացման ժամանակ, համարվում են պարզ ազնուականներ (դվօրեանին), շնորհիւ հայատեաց վրացի իշխան Ցիցիանովի։ Լինելով Կովկասեան զօրաց հրամանատար (1802-1806), իշխան Ցիցիանովը ձեռնարկում է երկրի ազնուականաց ցուցակի կազմութեան, բարձրագոյն հաստատութեան ներկայացնելու համար։ Այդ ցուցակի մէջ, հայոց Մելիքներին նա ներկայացնում է իբր «չէբէքանէ-պարզ ազնուական», իսկ վրաց Թաւադներին, իբր Կնեազներ։ Մինչդեռ յայտնի է, որ վրաց թաւադների մեծագոյն մասը ազնուականութեան պատուանունն է ստացած իրանց թագաւորներից, չլինելով որ եւ մի երկրի տէր, այլ սոսկ մի ձի, մի գերգրած խոյ, մի քանի տակառ կախեթի գինի իրանց [illegible] (առատաձեռն թագաւոր) ընծայելու փոխարէն. իսկ շատ անգամ էլ թագաւորի սեղանի մօտ, քէֆի ժամանակ, լաւ [illegible], [illegible], [illegible], քեամանչա, և ջինջի ածելու համար, կամ թէ չէ՝ բանամարտութեան մէջ անուն հանելով։ Այդ բանամարտութեան, կամ մուշտի կռւի, աքաղաղային սովորութիւնը մինչեւ հիմայ եւս մնացած է Տիֆլիսում և Վրաստանի այլ քաղաքներում, ուր ընտիր մուշտի խփողը, հասարակութեան և իշխանների հիացման ու ովսաննայի առարկան է լինում, որով բացվում է նորա առաջ իւրաքանչիւր վրացու դրանը, մանաւանդ նորա մէջ մի քանի կոպէկ գտնվելու հաղուադէպ դէպքում...

Մելիքների այսպիսի նուաստացման միջոցին, իշխանական տիտղոսը պահելով։ Մադաթովը արդէն ուսումը աւարտելու վրայ է լինում մանկլաւիկների վարժարանում, ուր տեղից դուրս է գալիս նա սպայի առաջին աստիճանաւ, մտնելով կայսերական հուսարների հեծելազօր գունդը։ Մի քանի տարից յետ նա կռուեց այս գնդի մէջ Նապոլէոն Բօնապարտի դէմ, ընկեր ունենալով իր հետ Լազարեանների հռչակաւոր գերդաստանից մի քաջ երիտասարդ, որն սպանվեց թնդանօթի ռումբով Լայպցիգի մօտ եղած պատերազմում. Իսկ Մադաթովը ողջ-առողջ մտնում է Փարիզ, Ռուսաց զօրաց հետ, արդէն հարիւրապետի աստիճանաւ։ Այս տեղ պատահում է նորան մի հետաքրքիր դէպք, որի պատմութիւնը բերած է Ղարաբաղ Մադաթովի անբաժան ծառայ Ցարութիւնը, որն երկայնահասակութեան պատճառաւ, Ջօլ (երկար) Արթիւն էր ասվում։ Ջօլ Արթիւնի շատ պատմածներից Ղարաբաղում, հետեւեալ անցքը միայն մէջ կը բերեմ։ Մադաթովի Ռուս ընկերները ձեռնարկում են Փարիզում, Ֆրանսիական մի դաս սպաների հետ, «լօտօ» ասվող թղթախաղի։ Այսպիսի խաղ, որ մեծաքանակ գումարներով է կատարվում, չատերի դժբաղդութեան պատճառ դառնալով, պաշտօնապէս արգելված է այժմ Ռուսաստանում, թէպէտ քիչ չէ պատահում որ անարգել թալանեն միմիանց խաղացողները, ժողովարանների դռնփակ սենեակներում։ Խաղը սովորաբար երկար չէ տեւում և նշանակած գումարը կամ առձեռն պէտք է ունենալ կամ թէ վստահելի մէկի երաշխաւորութեամբ անդորրագրած։ Զ'ունենալով խաղին սպասման դրած մի քանի միլիոն ֆրանկ ո՛չ կանխիկ և ո՛չ երաշխաւորած ապառիկ, Ռուս սպաները դիմում են յետադայ միջոցին։ Համաձայնեցնում են Մադաթովին, ինչպէս պատերազմական չատ վտանգներում քաջութեամբ փորձված մէկին, իր երաշխաւորութեան և անունի վրայ առնել մեծագումար խաղի վճարը։ Իսկ Ֆրանսիացի սպաների վստահութիւնը վաստկելու համար, յանձն են առնել տալիս Մադաթովին, ցոյց տալ իրան Ղարաբաղի սեփականատէր իշխան, որից յետ, քարտէզը բերելով, ամբողջ սպայական խմբի վկայութեամբ, գրաւ են դնում Ղարաբաղի նահանգը։ Տեսնելով, որ բոլոր ռուս սպաները Ղարաբաղի տէրն են ճանաչում Մադաթովին և պաշտօնական վկայութեամբ էլ իրօք նա իշխան է, Ֆրանսիացի ջէնտլմէնները էլ բնաւ կասկած չեն տանում ճշմարտութեան վրայ։ Մինչդեռ այսպիսի մի անվեհեր յանձնառութիւն բացորոշապէս գոյութեան և չգոյութեան խնդիր էր Մադաթովի համար. որովհետեւ՝ օֆիցերական պատւով երաշխաւորած մի խոստման դրժելը, ուրիշ ելք չէր կարող ունենալ իր վարկութեան առաջ, բացի աստիճանազրկութիւն, գուցէ և աւելին։

Սոսկալի պատասխանատուութիւնը վրան առած, չուբուկը զըրզըրցնելով, սառնասրտութեամբ նստում է Մադաթովը սպատօլի վրայ, երբ ընկերները սկսում են խաղալ նորա անունով։ Վիճակը որոշելու համար երկու-երեք վայրկեան է մնում, խեղճ Ջօլ Արթիւնը չուարված, չ'գիտէ թէ ինչ անէ, իսկ Մադաթովը հանդստութեամբ չուբուկը ծխելով, ասում է. «Արթի՛ն, հէնց որ տեսար բանը բուրդ է, ասա՛, բայց չ'լինի՛ թէ Ղարաբաղում իմանան թէ ինձ ջուրն եմ գցել. կ'ասես թէ սպանեցին։» Անվախ Ղարաբաղցին նստում է Սենայ գետի գլխին այն վճռողական մտադրութեամբ, որ բարձր պատշգամից իրան գցէ գետը, հէնց որ խաղի մէջ կորցրեց։ Ցանկարծ գոչում են. «Ուրա՛, իշխան, տարար։» Այսպիսի մի տաղնապալից վայրկենի մէջ, երբ մահը հոգուն կպած է լինում, Մադաթովը այնչափ կամք և ինքնավստահութիւն է ունենում, որ յուզման մի նշոյլ անգամ ցոյց չ'տալով, դիմում է անհոգաբար, չուբուկը քաշելով. «Ի՛նչ անենք թէ տարայ. ի՛նչ կայ այդչափ սլյուլվելու։»

* * *

Ռուսա-Ֆրանսիական գործերը վերջանալուց յետ, Մադաթովը երկար չէ մնում Ռուսաստանում, այլ փոխադրվելով Կովկաս, կռվում է լեռնականաց և Պարսից խաների հետ, նախքան Աբբաս-Միրզայի պատուհասի հասնելը։ Խաները, լինելով Պարսից ներկայացուցիչները Շաքուայ, Շիրվանի, Գանձակի և Ղարաբաղի նահանգներում, հաստատուած էին այդ տեղ երկար ժամանակ, ինչպէս պարսիկներից գրեթէ բոլորովին անկախ իշխաններ։ Ճնշելով և ջնջելով հետզհետէ հայ տարրը, մանաւանդ Շաքուայ (հին Սակասէն) և Շիրվանի նահանգում (Աղուանից երկրի մի մասը), խաները մահմեդական պրօպագանդայի բոյն էին դրել այդ տեղ ամբողջ Կովկասի վերաբերմամբ։

Այս տեղ անցողակի կերպով ասենք թէ՝ Շաքուայ և Շիրվանի քրիստոնէից համար, Մադաթովը մի անմոռանալի դիւցազն է, որովհետեւ հայ անունը կրելով, մի հոգեհան դեւ է եղել նա այն խաների համար, որոնց աչքում հայ ասելը մինչեւ այդ՝ աւելի քիչ բան էր, քան թէ անվեհերութեամբ նոցա քթի վրայ երբեմն նստող ճանճը ու մծակը։ Այդ մծակների միջից դուրս է գալիս յանկարծ մի փիղ, որը, կնճիթի ամենաթեթեւ չարժումով, այնպէս է նետում խաներին իր գլխի վրայից, որ Շաքիից և Շիրվանից նոքա ընկնում են ուղղակի իրանց եկած տեղը, Պարսկաստան։ 1817 թուին, Աբբաս-Միրզայի հետ գործ ունենալուց գրեթէ տասը տարի առաջ, նըշանակվելով Ղարաբաղի, Գանձակի, Շաքուայ և Շիրվանի խանութեանց ընդհանուր տնօրէն և կարգադրիչ, Մադաթովը վարվում էր այդ գաւառներում մնացած խաների և բէկերի հետ աւելի անողոք խըստութեամբ, քան թէ նոքա վարված էին, դարերի ընթացքում, իրանց հպատակած չարաբաղդ քրիստոնէից հետ։ Գործ դնելով այսպիսի խստութիւն, Մադաթովը ուզում էր միանգամ ընդ միշտ խորտակել այն ազդեցութիւնը, որ ունէին տիրապետող հարստահարիչները անձեռն ժողովրդի վրայ։

Պատմում են, որ մի օր ղարաբաղցի գեներալի խելքին փչում է հրաման ուղարկել Նուխուայ, կարծեմ Սելիմ խանին որ՝ լուսցերեկը ուղարկէ իրան իր աւագ կինը, նաժիշտներով շրջապատած։ Էլ հասկանալի է թէ ինչ հարուած էր ժողովրդի աչքում այսպիսի մի պատգամ այլադաւանների խանին։ Ջնջազանելու դէպքում հաստատ մահը աչքի տակ ունենալով, ճարահատ խանը դիմում է այսպիսի խորամանկութեան. զարդարել տալով աղախիններից մէկին և շրջապատելով նորան իր կնոջ վայել շքով, ուղարկում է Մադաթովին, միեւնոյն ժամանակ կինը և որդիքը վեր առած, գիշերը, պուկ է գալիս Պարսկաստան, էլ երբէք Մադաթովի երեսը չտեսնելու համար։ Այսպիսի տխուր ու զաւեշտական միջոցներով Մադաթովը մաքրում է իրան յանձնած խանութիւնները նոցա մէջ մնացած բոլոր քրիստոնէական «բարբարոսներից» ի մեծ մխիթարութիւն հայերի, որոնց աչըղները հարիւր ու մէկ երգեր հիւսելով, փոխարինում են Պարսից Բէօր-օղլին և Ռուստամ-Զալը հայոց Ռուստամով։ Այսպիսի քմահաճութեանց հետ միատեղ-ի հարկէ զօրաւորների հետ-Մադաթովը մեծ բարիք է անում խաղաղ և ընկճված ժողովրդին, նոր կարգեր, ատեաններ և դատավարական օրէնքներ սահմանելով նոցա համար։ Սորանից յետ, այլևայլ զինուորական և վարչական պաշտօններ վարելով, Մադաթովը ճակատում է վերջապէս Աբբաս-Միրզայի դէմ, որի մասին արդէն խօսեցինք։—

Վերոյիշեալ խանութիւնները կառավարած ժամանակը, Մադաթովը մեծ հարստութեան է տիրանում, բազմաթիւ գիւղեր եւ կալուածներ վաստակելով Ղարաբաղի նահանգում. այնպէս որ, այն կատակը, որն անում է Մադաթովը Փարիզում, անուանելով իրան Ղարաբաղի սեփականատէր իշխան, այդ կատակը, որ եւ է մի տասնեակ տարուայ մէջ, գրեթէ կատարեալ իրողութիւն է դառնում։ Այսպիսի հրաշանման փորձերն են գուցէ յառաջ բերել հայ ժողովրդի մէջ այն հաւատը թէ՝ մարդ, ինչ որ դնէ մտքումը, գործէ, աշխատէ ու համբերէ, Աստուած կը յաջողէ այն, եթէ նպատակը բարի է և վաստակը արդար։ Սորանի՞ց էլ աւելի հրաշանգիչ խրատ և միանգամայն անժխտելի ճշմարտութիւն ո՞րը կարող է լինել մեր անհատական և հասարակային կենաց ասպարիզում։ Թող այդ ճշմարտութիւնը ունենայ իրան քաջալեր իւրաքանչիւր հայ պատանին, որը, ծաղիկ հասակում, մթնացնում է իր պայծառ օրերը ծանր աշխատանքի և զրկանքների մէջ, հայրենիքի պարզ երես զաւակը դառնալու համար . . . ։

«Առանց պակասութեան գեղեցկութիւն չի լինիլ» ասում է առակը. և արդարեւ, տիրանալով այնչափ հարստութեան, պատուի, անուան ու մեծութեան, Մադաթովը ո՛չ միայն մոռանում է Մելիք-Ջիւմշիւդի և իրան Պետերբուրգ տարած այլ Մելիքների երախտիքը, այլ եւս նա՛ է լինում Մելիքներին զրկողը, նոցա կայք ու գոյքը յափշտակողը և օտարներին բաժանողը։ Մադաթո՛վը եղաւ նոյնպէս Ռուսաց բանակին այնչափ մեծ ծառայութիւններ մատուցած հայ կտրիճներին անտես անողը և նորանց տուած իր խոստումներին դրժողը։ Թէպէտ Մադաթովը արդարացնելիս է եղել իրան, ասելով թէ՝ իր ոխն է հանում Մելիքներից, երեխայութեան ժամանակ իրանց պալատների համար մէջքով նորան քար կրել տալու փոխարէն, բայց այդպիսի արդարացում միայն տմարդի և փոքրհոգի մարդուն վայելող վարք է, այլ ո՛չ Մադաթովի նման մի մեծահանճար զօրավարին պատիւ բերող։ Իր այդ վարմունքով, Հայերի և Մելիքների հետ, Մադաթովը արդարացրեց միայն այն առածի ճշմարտութիւնը, որ ասում է. «բոչայից փաշա չի դառնալ։» Այսպէս չէին մինչդեռ Մադաթովից էլ գուցէ աւելի մեծ և անուանի հայ զօրավարներ՝ ինչպէս Արղութեան-Երկայնաբազուկ, Լազարեվ և Տէր-Ղուկասով, որոնց ասպետական մեծահոգութեանց օրինակները կը բերենք, հերթը նոցա հասած ժամանակը։

Մադաթովի մի ուրիշ տգեղ արարքը՝ նորա կրօնափոխութիւնն է, որի համար ի զո՛ւր այնչափ զղջում կը յայտնէր նա իր կենաց վերջերում։ Ո՛, Մադաթովի նման ո՛րչափ դժբաղդներ ենք տեսած Ռուսահայոց մէջ, որոնք դաստիարակուելով, մանկութեան ժամանակից, Ռուսաց կօրպուսներում (զինուորական վարժարան), ստանալով մի քանի կիցկտուր և չը մարսած ազատական մտքեր, խորթանում են հօրից և մօրից, արհամարհում են և անարգում նոցա արտասուքը և աղերսալից յորդորը ու չլանալով զանազան սնոտի հրապոյրներից, գնում են ամուսնանում օտար աղջիկների հետ։ Անմխիթար ծնողաց կսկծալից խօսքերը նոցա համար հարկաւ այլ եւս «հին» և «խելքից ցնդած» մարդկանց բարբանջանք են երեւում. բայց չէ անցնում երկու-երեք տարի, ամուսնութեան ոսկեզօծ շրջանից, է՛լ անճանաչելի է դառնում մեր «ազատ» և «ինքնապաստան» կտրիճը։ Խեղճը վրդովուած, միտքը մոլորված, սիրտը կոտրված, ո՛չ հայ, ո՛չ օտար, նա մնում է անվերջանալի մտատանջութեանց զոհ. եւ չատ անգամ իսկ չ'կարողանալով տանել իր կարծամտութիւնից յառաջ եկած տաժանելի վիճակը, բարձի թողի է անում իրան, անձնատուր լինում թղթախաղին, խմիչքին և ուրիշ տեսակ ցոփութեանց ու վերջացնում կեանքը ամենաողորմելի կերպով։ Ահա սա՛ է եղած մեր տեսածների գրեթէ ամենքի վիճակը. դիւրին բան չէ թուզը տատասկի հետ պատուաստելը։ Թէ ո՛րչափ զղջում և մտատանջութիւն է պատճառում Մադաթովին Ռուս աղջկայ հետ ամուսնանալը, այդ մասին մէջ կը բերենք նորա յատուկ խօսքերը, իր մտերիմ ծառայ Արթիւնին յայտնած. առ այժմ դեռ լրացնենք նորա գործերի պատմութիւնը։

Շամքորի և Գանձակի ջարդով դեռ չեն վհատվում Պարսիկները, այլ անցնելով Երասխից դէն և տեսնելով, որ Ռուսները չեն գալիս յետեւներից, կրկին չունչ առած, պատրաստվում են կռիւը նորոգելու հետեւեալ գարնան։ Վասնորոյ, այս պատրաստութիւնները արգելելու համար, Երմոլովը յանձնարարում է Մադաթովին, մի անակնկալ ձմերային արշաւանք գործել Պարսկաստանի վրայ։ Պարսից ոխերիմ Մադաթովն էլ հէնց այսպիսի առթի էր սպասում. ունենալով հետը միայն մի վաշտ կանոնաւոր զօրք, նա կրկին հրաւէր է կարդում հայ կամաւորներին, որոնք նոյն անխախտ հաւատարմութեամբ ժողովվում են Մադաթովի չուրջը և չ'նայելով Պարսից ցոյց տուած ընդդիմադրութեան, ձիւնձմեռը ճեղքում են անցնում Երասխ գետը, տապալում իրանց դէմ գնող զօրութիւնները և կրկին աջ ու ձախ սարսափ տարածում։ Պարսկաստանի Հայերը, կարծելով թէ իրանց յաղթող սրբենակիցներն էլ չը պիտի թողնեն գրաւած տեղերը, մեծ ոգեւորութեամբ միանում են նոցա հետ Մադաթովի դրօշակի տակ։ Բայց աւա՛ղ խեղճերին. Մադաթովը հրաման է ստանում յանկարծ, բաւականանալ իր կատարածներով ու յետ դառնալ Պարսից հողից. անհեռատես Պարսկահայերը մնում են յուսահատութեան մէջ։ Սորանից յետ է, որ տեղի է ունենում ազգաւեր չարժումը Պարսկաստանից, որով 40 հազար հայ ընտանիք ստիպված են լինում՝ աղի արտասուքով թողնել իրանց լի և բարգաւաճ տները-տեղերը ու գաղթել Կովկաս, ո՛ր և է մի քանի տասնեակ տարիների ընթացքում, հայութիւնից խորթանալու ու խսպառ նորանից դուրս գալու համար . . . ։ Մինչդեռ մնալով իրանց հայրաւանդ բնակավայրերում, 40 հազար հայերը մինչեւ հիմայ գոնէ եռապատիկ բազմանալով, կը կազմէին Պարսկահայաստանի մէջ մի ահագին ամփոփ զօրութիւն, պահելով միանգամայն ազգային ամեն հարազատ բարեմասնութիւնները։ Նոյն ազգակործան սխալն ունեցան և Տաճկահայերը, 90 հազար հոգու չափ հետեւելով Կարապետ Եպիսկոպոսի անձնաչահ և ազգակործան յորդորներին 1828 թուին. նոյն չարաբաղդ վիճակին պիտի հանդիպէին և Էրզրումի նահանգի հայերը, այս վերջին պատերազմի ժամանակ, եթէ յոյսը մնար Կ. Պոլսի Պատրիարքարանի հոգատարութեան վրայ . . . բայց այս մասին իր տեղը . . . ։ Մեր մէջ դեռ «հեղինակներ» կան, որոնք Կարապետ եպիսկոպոսին «Հայոց Մովսէս» են կոչում . . . ։

ԳՐ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Սիմ գօրտօն, պէհէրի եէթմիշ պէշ ղուրուշ.

Սիմսէն մամուլ բիյազ գալիթ օմուզ քէօրրիսի, պէհէրի չիֆթի ալթը ղուրուշ.

Սիմսէն մամուլ սիւարի գալըթանը իչիւն պուրմա օմուզ լամբասը, պէհէրի չիֆթի օն սէքիզ ղուրուշ.

Սիմսէն մամուլ Թօբճը գալըթանը իչիւն պուրմա օմուզ լամպասը, պէհէրի չիֆթի օն ղուրուշ.

Սիմսէն մամուլ Թըպպիյէ գալըթանը իչիւն օմուզ լամպասը, պէհէրի չիֆթի օն սէքիզ ղուրուշ։

Նիզամիյէ էլպիսէ անպարընտա մահֆուզ նիւմունէլէրինէ վէ չուրութը մուգարրէրէսինէ թէվֆիգէն պիր սէնէտ լիւզումի մըգտարըյարը ալընմագ իւզրէ մինագասայա գօնուլան պալաթէ մուրադգամ պէշ գալեմ էչեա փիյաթը մուրադգամալէրի իլէ թալիպլէրի էօհտէսինտէ օլուպ, չուպաթը րումինին օն իքինճի չարշէնպէհ կիւնիւնէ գատար պէհէր կիւն մինագասը պիլ իճրա մէզքիւր կիւնտէ գարարը գաթիսի վէրիլէճէկինտէն, իթա իթմէյէ թալիպ վէ օն իւչիւնճիւ պէնչշէնպէհ կիւնիւ խիւզատ պէշ թէնզիլինէ բաղլըպ պուլունանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ թահրիրաթինէ կէլմէլէրի իլան օլունուր։

4 Շուպաթ 1886

1—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Էլպիսէ անպարընտա միւթէրագիմ օն տէօրթ գալէմ չուհա վէ սապա դըրբընթըլարընըն անպարէ մէզքիւրատէ միւզայէտէլէրի իճրա օլունարագ ֆիյաթը մալումը իլէ թալիպլէրի էօհտէսինտէ գալմըշ վէ չուպաթը րումինին օնունճը բազար իրթէսի կիւնիւնէ գատար պէհէր կիւն միւզայէտէլէրի պիլ իճրա մէզքիւր կիւնտէ գարարը գաթիլէրինին վէրիլէճէյինտէն ալընմամըշ օլմաղլա, օլ վէճհ իլէ իշթիրայա թալիպ վէ օն պիրինճի սալը կիւնիւ խիւզատ պէշ գամմըլնա բաղլըպ պուլունանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ թահրիրաթինէ կէլմէլէրի իլան օլունուր։

4 Շուպաթ 1886

1—3

ՀՐԴԵՀԻ եւ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ էնտ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 5,594,956
ՀԱՍՈՅԹ 1884 ՏԱՐՒՈՅ 1,718,462

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 2,993,184
ՀԱՍՈՅԹ 1884 ՏԱՐՒՈՅ 828,858

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի փոխադարձ ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. Նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուած վնասնին 11,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000

«ՄԱՐԻԹԱՅՄ»

ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 120,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիօն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց։

ՀԱՐՍՆԵԿԱՆ ԾԱՂԿԱՓՈՒՆՋ

ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՐՄՆՈՅ ԳՈՅՆԻՆ, ՄԻԱՅՆ ԾԱՂԿԱՓԹԻԹ, ՄԻԱՅՆ ԹԱՐՄ։

Ընդամենն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ։ Առաջին անգամ գործածելումն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի թէ որ երեսը, վիզը, թևերը և ձեռուըները պիտի ստանուն անոյշ փափկութիւն մը և մարմարինի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ։ Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ։ Ինչպէս կ'ընէ մորթի սևուքը, երեսի և ձեռքի ցանները, արևայրուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բծաւորութիւն։ Եւ աս ամեն բանով՝ անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է։

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիւ-Եօրք։ Նրվաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով։

Կը գտնուի Ն. և Ժ. Գանզիւք եղբարց բրիտանական դեղարանն, Բերա, Մեծ փողոց. Էսմընտ Գարուսանա, Անգլիական մթերանոց, Եւ.քսէ.ք Գալթերբմ. և Իզիտոր Լազանտէլլա, 433, Բերա Մեծ փողոց։

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԵՐԻ

Նիզամիյէ էրզագ անպարը իչուն մուպայեասը մուզայէտէյէ գօնուլան հալին պէշ պին սանտըգ Ամէրիգան գազըրըն իչուն չուպաթըն բուլունմ թէօրթունճու սալը կիւնի գարարը գաթիյի սիրիչէճէկինտէն վէ պէչինճի չարչըն. պա խաթին կիւնի թէքարրիւր իտէն ֆիյաթընտան հիւզտէ պէշ թենզիլի գաւալէ օլունաճաղընտան իսթիյա թալիպ օլանլարըն լէֆալիմաթը ուսուլիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

2 շուպաթ 1886

3—3

ԻԼԱՆ

ՇԷՀԻՐ ԷՄԱՆԷԹԻ

Իւչ պին իքի սէնէսի իչին մէրքէզը Էմանէթ վէ մուլհագաթ վէ տէվաիրի պէլէտիյէ աչլամընտա սարֆ օլունմագ իւզրէ մուպայեասընա լիւզում կէօրիւնէն մունհասըրան գըրթասիյէնին գարարը գաթիյի չուպաթըն երիրմիճի բէնչշէնպիհ կիւնի վերիլէճէկինտէն, իթայէ թալիպ օլանլարըն թէրիգիթօ աչըլէրի վէ հա մուքթեզի քէֆիլլէրի իլէ մուտաթըլը մէրքումտէ զարֆիյէ Շէհիր Էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

2 Շուպաթ 301

2—2

ԻԼԱՆ

ՇԷՀԻՐ ԷՄԱՆԷԹԻ

Ցէրաաթէյն վէ պիլաար սէյյաս գանթար վէ բուլ-բուսուլը իլէ չարչըլի մուհաֆազերաթ վէ էսպ բաղըրլարը վէ մասրուֆ սուլար վէ մաշաքը մալիւմէթէ պուլունան չէքիլէր բէտէլի վէ սաիր բուսուլաթը մունթեզիրիդա. իւչ պին իքի սէնէսի մարթը իպթիտասընտան իթիպարէն թէքվիլը դամիթ վէ ճէզէ բարէ օլունմագ իւզրէ պիլմուզայեատէ ուհտէյէ սաղիրա օլունաճագընտան, թալիպ օլանլարըն մուսթեզի քէֆիլ վէ խալպա թէէմինաթ աչըլէրի իլէ պերապէր Շէհիր Էմանէթի մէճլիսինէ մուրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր։

3 Շուպաթ 301

2—3

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՃՈԽԱՑԵԱԼ ՆԱՐԵՒՈՐ ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎՔ
ի պէտս Ազգային Վարժարանաց
Ի Ց. ՏԻՒՔԷՆՃԵԱՆԷ

ՎԻԱԼԻ ԳԻՆԻ

ԿԱԶԴՈՒՐԻՉ ԶՕՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Ամենազդու կազդուրիչն զօր պարտին գործածել Ապաքինողները, Ծերերը, Կանայք, տկարակազմ Տղայներն և ամեն փափուկ անձինք։

ՔԻՆԱՅՈՎ ՄՍԻ ՀԻՒԹ ՖՈՍՖԱԹ ՏԸ ՇՕ

Բաղկացեալ Մկանանց և Ջղային ու Ոսկրային դրութեանց կազմութեան և Զարգացման յոյժ անհրաժեշտ նիւթերով։

ՎԻԱԼԻ ԳԻՆԻՆ ամենէն ազդու դեղերու միաւորութիւնն է, ընդդէմ Արեան տկարութեան, Դեղնութեան, Թզքախտի, Ստամոքսի ամեն ցաւերու, փորհարութեան, Հիւծման, երկար ապաքինմանց, ևսայլն. ի մի բան, Թուլութեան, Վտտութեան, Ջղային ուժհատութեան ամեն վիճակներուն որոց շատեր չարաչուք կերպիւ ենթակայ են մեր օրերս։

ԼԻՈՆ—Դեղարան Ժ. ՎԻԱԼ, Պուրպոն փողոց, 14—ԼԻՈՆ

Պոլսոյ մէջ կեդրոնատեղին է ընդհանուր Մթերանոցն Ալիբրանտիի դեղարան Տելլա-Սուտա, Բերա մեծ փողոց 169։

Ֆրանսայի և օտար երկիրներու ամեն հոտավաճառաց և վարսայարդարաց քով։

La VELOUTINE

Poudre de Riz spéciale
PRÉPARÉE AU BISMUTH
Par CHles FAY, Parfumeur
PARIS — 9, Rue de la Paix, 9 — PARIS

ՆՈՐՏՏԱՅՉԷ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՄՊՈՒՐԿ

Յիշեալ ընկերութիւնն հրդեհի դէմ կ'ապահովագրէ տուներ, կարասիներ, խանութներ և ապրանքներ յոյժ շահաւէտ պայմաններով, միջնորդութեամբ իւր ընդհանուր գործակալութեան։

ՀԻՆՑԼԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՀՃԷ-ԳԱՊՈՒ, ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ
50

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՌԻԼԱՅԸՆՍ

Ծովային ապահովագրութիւն։ Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիթըլ, Ուիթըլ խան Պահչէ-գաբու, Պոլիս. կամ Ղալաթիա Ալէքսիանտի խան թիւ 20։

507

CAISSE GENERALE D'EPARGNE ET DE CREDIT

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՆՏՈՒԿ ԽՆԱՅՈՂՈՒԹԵԱՆ եւ ՎԱՐԿԻ

Կեդրոնատեղի 116, Հրապարակ Լաֆայէթ, Բարիզ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 1,000,000 ՖՐԱՆԳ

Բարիզի Ընդհանուր Խնայողական Սնտուկին գործառնութիւնքն են, Գաղղիոյ կառավարութեան անմիջական «երաշխաւորութեան» ներքև գտնուող, և մեծամեծ պարգևներով վիճակահանութեանց մասնակցող Ֆրանսական արժէթղթոց վաճառումը։

Ընկերութիւնը կազմուած լինելով 24 Յուլիս 1867 թուականաւ օրինագրին տրամադրութեանց համաձայն, իւր գործողութիւնք Ֆրանսայի կառավարութեան քննութեանն «գօնթրօլ» ենթարկուած են։ Այս մեծ և անժխտելի ապահովութիւն մ'է զօր ընկերութիւնն ընծայէ յաճախորդաց։

Ընկերութիւնը կը դիւրացնէ հասարակութեան «ամսական վճարմանց միջոցաւ» դիւել մի փոքր հարստութիւն և ունենալ միանգամայն մեծ պարգև մը շահելու յոյսն։

Առաջին ամսավճարն տրուելուն պէս, բաժանորդն կ'ընդունի իւր գնած արժէթղթին թիւն, և կը վայելէ նորա իրաւունքներն, որպէս թէ բաժնէթղթին գինն ամբողջովին վճարած լինէր. Հետևաբար արժէթղթին շահելիք պարգևներն և տոկոսի կտրօններն իրեն կը վերաբերին։

Ամսական վճարմունք են, ըստ արժէթղթին 5, 10 և 20 ֆրանք։

Մանրամասն տեղեկութեանց համար դիմել առ Ընդհանուր Ներկայացուցիչն Ընկերութեան վասն Թուրքիոյ, Ապտուլլահ Նասի էֆէնտի, 4 Պահճէ-գաբու, Կ. Պոլիս։

Ներկայացուցիչ ի Պրուսա, Յովհաննէս էֆէնտի Յ. Պօտուրեան

Ներկայացուցիչ ի Զմիւռնիա Միսիւ Փ. Փեթրօզզինօ։

Ց. ՄԱՍԹԻՒՍԵԱՆ

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ի ՊԱՅԾԱՌ ՀԱՌԻՋ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ՅՈԿՈՒՇՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Այն կազմատան մէջ ամէն տեսակ գիրքեր և տումարներ կը կազմուին չափաւոր գիներով։ Կազմատունը ունի եւրոպական ընտիր գործիներ նորագոյն կատարելութեամբք շինուած, և կարող է ամեն տեսակ գիրքեր պատրաստել յոյժ ընտիր և հաստատուն կազմով։

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլ և Միջերկրական ծովու բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբուս	4200	Թալիթա	3000
Ֆերոս	4000	Նէրէիտ	3000
Օսմանլի	4000	Բերսա	3000
Սեսոստրիս	3250	Ալգոնդակ	1700
Թեպա	3250	Լոդոս	800
Մենֆիս	3250	Օլինտա	800
Մարեոթիս	3250	Ակեւլ	700
Սֆինքս	3000		

Ալմինէ շոգենաւը, Նաւապետ Լօքհէտ, Լիվրբուլէն աստ հասաւ ընդհանուր վաճառքով։

Թէպա շոգենաւը, Նաւապետ Տրֆֆի, ամսոյս դէպի 10ին, ուղղակի Լիվրբուլ պիտի երթայ։

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹԸԼ և ԸՆԿ. Մէյտանճըգ փողոց, Ուիթըլ խան

ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ. 31, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

515

ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Սէր ամէն շաբաթ կանոնաւոր կը բանին Լիվրբուլ և Միջերկրական ծովը։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ադլաս	3,000	Մալթա	3,000
Ալեփփօ	3,000	Մորոքքօ	2,500
Պալպէք	2,500	Նամիթ	2,500
Գեդար	1,200	Պալմիրա	3,000
Շէրթօրլը	2,000	Սիդոն	4,600
Կէմբրաբա	2,500	Սարակոսա	3,000
Կալլիա	4,000	Սամարիա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500

Պէտար շոգենաւը, Նաւապետ Ֆէրկիւսըն, Լիվրբուլէն աստ հասաւ ընդհանուր վաճառքով։

Բէթոր շոգենաւը, Նաւապետ Ֆէրկիւսըն, ամսոյս 10ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՕՆԻ Գործակատար Թիւ 1 Քիւչիւք Հաւիւէ փաշա խան Ղալաթիա

511

ԲԱԲԱՅԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլ, Միջերկրական և Սև ծովու բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Ալա Սօֆիա	3,000	Պեգս
Արգարիա	2,500	Բոմբըլս
Արմենիա	2,500	Քրուքշանք
Լագոնիա	2,500	Ուիլքս
Մասեդոնիա	,500	Մորս
Րումելիա	2,800	Ֆօթըրկիլ

Բալմ շոգենաւը, Նաւապետ Ուստինկըն, փետրուար 12ին Պաթումէն աստ դառնալով Լիվրբուլ պիտի ուղևորի։

Արմենիա շոգենաւը, փետրուար 7 ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը սրուին ուղևորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲԱ ԵՒ ԸՆԿ. Գործակալք

513

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Սէր կանոնաւորապէս կը բանին Լիվրբուլ և Արևելեան ծովը։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալճերիան	2500	Ֆավոնիան	3700
Ալպանիան	2500	Ֆլամինեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլավեան	3700
Աթենեան	2500	Իսկելեան	5500
Արաբեան	3700	Իւերեան	5500
Պավարեան	6000	Իտալեան	5500
Պուլկարեան	6000	Լեսպեան	2200
Քասթիլեան	800	Լիկուրեան	2500
Սայփրեան	2000	Լիպեան	800
Տաուրուս	700	Օլիմպոս	700
Եճիբթեան	3700	Բերսեան	3800
Ֆաթիան	3700	Վալենսիան	6800
Ֆալերեան	3700	Վենիսեան	6800

Լէզպեան շոգենաւը, Նաւապետ Պօլ, վանսաման վաճառքով ամսոյս 18ին աստ կ'սպասուի։

Ուղևորներու համար ամեն դիւրութիւն։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ Գործակալ Թիւ 34, 35, 36, Եէնի Միւլէթ խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ֆիլիպպուպօլ, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վաչման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլըրի.
Շիրա, Ա. Մ. Մավրօկորտադոյ.
Զմիւռնիա, Պ. Ռէյդօլ և ընկ.

512

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՑԿԱՑԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԲԵԱՆ

Ն. ԲԱՔԷ եւ ԸՆԿ.

Մարսիլիայ և Բոնէի միջև բանող շոգենաւք

Մէսօլ շոգենաւն փետրուար 10ին պիտի մեկնի ի Հավր։

Ուղևորաց և ապրանքներու համար

Նաւուղեկի, ուղևորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն ԹԻՆԻՈԹԷ ՐԸՊՈՒԼ Թիւ 17—18 Քիւչիւք Միլլէթ Մումհանէ փողոց, Թիւ 141

514

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՑ

Հըլ Ալ Աթէլեյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ

ՈՐԴԻՔ եւ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալբանօ	2,000	Լէանտրօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մարտանի	2,500
Պասսանօ	3,500	Միլօ	2,000
Պրոնթէ	2,200	Նէրօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Գէտրօ	2,600	Օրլանտօ	3,000
Գալիբսօ	2,500	Օֆրանգօ	4,500
Գամիլօ	2,400	Օրտօ	2,000
Գավօ	2,000	Բասիֆիք	1,200
Գոմօ	2,700	Բալբրմօ	3,200
Տիտօ	2,500	Բասսաբեր	1,700
Տօլմինօ	1,800	Բիգօ	2,800
Էրալօ	2,600	Րիւալթօ	4,400
Էրատօ	2,600	Րինալտօ	3,200
Ֆալքօն	800	Րօլլօ	3,000
Ֆլոռա	1,700	Րոմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Րոմէօ	3,500
Կալիլէօ	5,500	Սալէռնօ	4,000
Կիտալգօ	2,200	Սաֆօ	2,000
Կօզօ	1,800	Սիլվիօ	2,000
Կրոտօ	2,200	Սորէնտօ	4,300
Ճանկօ		Թասսօ	1,200
Ժէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիւալօ	3,000	Թիկէր	1,300
Հիտալկօ	1,200	Թօլէտօ	2,800
Ճէտօ	2,300	Վանտօ	3,600
Քէթօ	2,000	Նէտօ	1600
Քօզօ	2,200	Ջէրրա	3,000
Լէօ	2,000	Ջէրօ	41,0

Թէյլօ շոգենաւը, Նաւապետ Մօյրօ, ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասած պարպած և յՕտեսա ուղևորած է։

Մօռոնօ շոգենաւը, ընդհանուր վաճառքով Հըլէն մեկնած է փետրվար 1 ին, և 18ին աստ կսպասուի։

Ուղևորներու համար ամեն դիւրութիւններ կ'ընծայուի

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ ԵՒ ԸՆԿ. Գործակալք Թիւ 17–18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

514

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ



ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբերի (Ն. Տ.) 1885, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	0	4	2	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	60				
	Առաւօտ												Իրիկուն													
	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.
Պոլիս	6 17	6 50	7 15	7 42	8 14	8 43	9 12	9 42	10 20	10 39	11 17	11 49	12 55	1 31	2 31	3 2	3 40	4 15	4 44	5 23	5 44	6 11	—	...	...	...
Գում—գաբու	6 28	7 ...	7 27	7 53	8 25	8 54	9 23	9 53	10 30	10 49	11 28	12 ...	1 6	1 42	2 41	3 13	3 51	4 26	4 55	5 34	5 54	6 22	...	...	...	...
Եէնի—գաբու	...	...	...	7 57	...	8 58	...	... ...	10 34	10 53	11 32	12 4	1 10	1 45	2 45	3 17	3 55	4 30	4 59	5 38	...	6 26	...	...	...	...
Տավուգ փազար	...	...	...	8 ...	...	...	...	... ...	10 37	10 56	11 35	12 7	1 13	1 49	2 48	3 20	3 58	4 31	...	5 41	...	6 29	...	...	...	...
Սամաթիա	...	...	...	8 6	...	9 4	...	... ...	10 42	11 1	11 40	12 12	1 18	1 54	2 53	3 25	4 3	4 38	5 5	5 46	...	6 34	...	...	...	...
Եէտի—գուլէ	6 37	7 10	7 41	8 12	8 33	9 10	9 31	10 1	10 46	11 4	11 45	12 15	1 21	1 59	2 58	3 28	4 9	4 41	5 10	5 49	6 4	6 39	...	...	...	...
Մագրիգիւղ	6 48	7 23	8 ...	8 24	...	9 22	...	... ...	10 58	... ...	11 58	... ...	... ...	2 11	3 9	...	4 21	...	5 22	...	6 16	6 50	...	...	...	...
Այ Ստեֆանօ	...	7 33	8 14	8 34	...	9 32	...	... ...	11 8	... ...	12 9	... ..	... ...	2 21	...	...	4 31	...	5 32	...	6 28	...	...	...	...	...
Քիւչիւք Չէք	...	...	8 25	...	...	...	...	... ...	... ...	... ...	12 18	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	6 37	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	3	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	61	63	1				
	Առաւօտ												Իրիկուն													
	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.	Ժ. Վ.
Քիւչիւք Չէք	...	6 34	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	1 24	...	...	...	...	...	...	...	...	6 38	...	...	...	...
Այ Ստեֆանօ	...	6 44	...	7 45	...	8 44	... ...	9 38	... ...	... ...	11 20	... ...	1 34	...	2 33	...	...	...	4 48	5 39	...	6 51	...	...	...	...
Մագրիգիւղ	6 ...	6 55	7 24	7 57	...	8 55	... ...	9 49	... ...	... ...	11 31	... ...	1 45	...	2 44	3 20	...	...	4 59	5 50	...	7 5	...	...	...	...
Եէտի—գուլէ	6 13	7 8	7 37	8 11	8 38	9 9	9 37	10 2	10 12	11 12	11 44	12 48	1 58	2 23	2 57	3 33	4 8	4 46	5 14	6 4	6 38	7 26	...	...	...	...
Սամաթիա	6 17	7 12	7 41	8 15	8 42	9 13	9 41	... ...	10 16	11 16	11 48	12 52	2 2	2 28	3 1	3 37	4 12	...	5 19	6 08	6 42	...	...	...	...	...
Տավուգ փազար	6 22	7 17	7 46	...	8 47	...	9 46	... ...	10 21	11 21	11 53	12 57	...	2 33	3 6	3 42	4 17	...	5 24	6 13	6 47	...	...	...	...	...
Եէնի—գաբու	6 25	7 20	7 49	8 21	8 50	9 19	9 49	... ...	10 24	11 24	11 56	1 ...	2 8	2 36	3 9	3 45	4 20	...	5 28	6 16	6 50	...	...	...	...	...
Գում—գաբու	6 30	7 25	7 54	8 26	8 55	9 24	9 54	10 11	10 29	11 29	12 1	1 5	2 12	2 41	3 14	3 50	4 25	4 56	5 33	6 21	6 54	7 40	...	...	...	...
Կ. Պոլիս	6 39	7 34	8 3	8 35	9 4	9 33	10 3	10 20	10 38	11 38	12 10	1 14	2 21	2 50	3 23	3 59	4 34	5 5	5 42	6 30	7 3	7 50	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրի գիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջև բանող կառախմբոց միջև. Ուրբաթ և Կիրակի օրերն թիւ 20 կառախումբը կանգ պիտի առնու ի Ֆլօրիա։